

Որպես ՉԵՆ՝ Ճշմարտություն

# MASSIS

**MASSIS**

Մարտ 2022, (74-րդ տարի) - Նոր շրջան թիվ 181

ماسيس


Mars 2022, (74ème année) - No. 181

آذار ۲۰۲۲ (السنة ۷۴) - عدد ۱۸۱



ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝  
ԱՐՕԹՔՈՎ ԵՒ  
ԴԻՎՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ





« Հայկական կաղնին շատ փոթորիկներ դիմագրաւած եւ մնացած է միշտ կանգուն. նահատակներու արիւնով կնքուած մուրհակը կը պահէ իր արժէքը եւ մեզի կը թելադրէ պողպատէ դարձնել մեր կամքը, մինչեւ որ ունենանք արդար հողային հատուցում, խղճի ազատութիւն եւ ազգահաւաքում բովանդակ հայութեան: Պիտի տոկանք, պիտի տեւենք մնալու համար միշտ հաւատարիմ Ապրիլեան Նահատակներու կտակին ու պատգամին:

**ԿԱՐԴԻՆԱԼ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ**  
**Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց**  
**Կաթողիկոս Պատրիարք**

27 Ապրիլ 1947



# ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱԴԻՑՆԵԼ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԱՐՕԹՔՈՎ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ .....	Սարգիս Նաճարեան	3
ԴԵՊԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ ՍԸ .....	Համբի Էլմաճեան	7
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ Ա.Ս.Ն. ԴԵՍՊԱՆԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ ՀԵՏ .....		11
ՏՕԼ ՍՐԲՈՅ ԿՈՒՄԻՆ ԱԻԵՏՄԱՆ .....	Հ. Մովսէս Վրդ. Տոնանեան	12
ՌԱՖԱՅԵԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԼԵՒՈՆ ՇԱՆԹ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՂՈՆ .....		14
ՀԱՅԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ ԵՒ ԱԶԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՁԱՏԱԳՈՎ ՊԵՆԵՏԻԿՏՈՍ ԺԵ.Ի ՄԱՀՈՒՄԸ 100-ԱՄԵԱԿ .....	Ռուպեր Աթթարեան	17
«ՍԻՐՈՎ» ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ՍՐԲՈՒԹԻՒՆ .....	Հ. Գեորգ Վրդ. Չապարեան	19
ԱՊԱԳԱՅ ԲԱԶԱԿՈՐՈՎ ՀՈՎԻՒՆԵՐՈՒ ԴԱՐԲՆՈՅԸ .....	Սարգիս Նաճարեան	21
ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տ. ՍԱՀԱԿ ՍՐԿ. ԲԵՇԻՇԵԱՆԻ .....		24
Միսաք Մեծարենց (1886-1908) «...ՀՈԳԻՍ ԱՆԾԻՐ ՄՈԳՈՒԹԵԱՄԲ ՍԸ ԿԸ ԽՆԿԵ...» .....	Վարդան Բեշիշեան	29
ՅՈՒՂԵՐ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԿՈՒՐԱԿՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԻ .....	Սարգիս Բեշիշեան	33
ԾԱՂԿԵՊԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԱՐՏԵԶՆԵՐՈՒ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ .....		40
ԴԱԴԻՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՐՄԱՆԱԿԱՐՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՈՒՐՈՒՄԸ ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ ՀՈՈՍԻ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ .....		43
««ՎԵՆԵՏԻԿԻ ԹԵՒՄԻՈՐ ԱՌԻԲԸ»» .....	Ն.Է.Ն.	45



ԱՄՍԻՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲՆԱԿԱԿԱՆ,  
ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՇԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝  
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ  
ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԹԵՄԻ

ՊԱՏՄԱՆԱՆՏՈՒ ԽԱՐԵՐ՝  
ՀԱՅԻ ՍԵՊՈՒՀ ՎՐՈՒ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՄԱՆԱՆՏՈՒ ՏՆՕՐԷՆ՝  
ՍԱՐԳԻՍ ՆԱԽԱՐԵԱՆ

ماسيس

جريدة أسبوعية سياسية ثقافية

صاحبة الإمتياز

بطيركية الأرمن الكاثوليك

رئيس التحرير

الأب سيبوه كرابيديان

المدير المسؤول

سركيس نجاريان

MASSIS

Hébdomadaire  
politique et culturel

Publication  
PATRIARCAT CATHOLIQUE  
ARMÉNIEN

Rédacteur en chef:  
Père SEBOUH GARABETIAN

Directeur responsable:  
SARKIS NADJARIAN

Zalka, Rue Zoghbi, Imm. Église Ste. Croix

Telefax: 00961 4 715 263 E-mail: massisonline@gmail.com Web: www.armeniancatholic.org



# ԴԱԴՐԵՑՆԵԼ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԱՂՕԹՔՐՈՎ ԵՒ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ



24 Փետրուարին, ռուսական բանակի Ուքրանիա ներխուժումով պայթած պատերազմին առաջին հակազդողը եղաւ Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետը: Ան պահանջեց «զինեալ յարձակումներուն դադրեցումը» եւ անմիջապէս իրեն մօտիկ երկու կարդինալներ ուղարկեց Ուքրանիա: Պատերազմի պայթումին յաջորդ օրն իսկ ան անձամբ գնաց ռուսական դեսպանատուն «յայտնելու համար իր մտահոգութիւնը», ինչ որ պատմականօրէն աննախընթաց քաջ մըն էր, որովհետեւ Սրբազան Քահանայապետը, ինք, երբեք անձամբ չերթար օտար դեսպանատուներ կամ դիւանագիտական ներկայացուցչութիւններ, այլ Վատիկանի մօտ նշանակուած դիւանագէտները կ'ընդունի առաքելական պալատին մէջ: Ռուսական դեսպանատուն անակնկալ այցելութենէն անմիջապէս ետք, Ֆրանչիսկոս հեռաձայնեց Ուքրանիոյ նա-

խազահ Վոլոտիմիր Զելենսքիին, իսկ Վատիկանի պետական քարտուղարը, Կարդինալ Փիեթրո Փարոլին՝ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկեյ Լավրովին եւ 9 Մարտին հրապարակեց միջնորդութիւն կատարելու Վատիկանի պատրաստակամութիւնը՝ զոր հաւանաբար փոխանցած էր Լավրովին:

Այս բոլորով հանդերձ, ռուսական յարձակումը բացայայտօրէն դատապարտող խօսք մը չարտասանեց Վատիկան, հաւատարիմ՝ իր միջնորդական առաքելութիւնները լուսարձակներէ հեռու կատարելու եւ հրապարակային դատապարտումներէ խուսափելու սկզբունքին:

Կիրակի, 6 Մարտին, Ֆրանչիսկոս հրապարակաւ բանակցութիւններու կոչ ըրաւ, ըսելով որ «Վատիկան պատրաստ է ամէն ինչ ընելու ի խնդիր խաղաղութեան»: Իրաւամբ, Արբազան Քահանայապետը անձամբ եւ վատիկանեան դիւանագիտութիւնը չդադրեցան զէնքերը լռեցնելու եւ խաղաղութիւնը վերահաստատելու կոչեր հնչեցնելէ եւ միջնորդութիւն կատարելու պատրաստակամութիւն ցուցաբերելէ:

2 Մարտին, Մոխրոցին, որ ծոմապահութեան սկիզբն է, Պապը այդ օրը հռչակեց ծոմապահութեան եւ աղօթքի օր խաղաղութեան վերահաստատումին համար Ուքրանիոյ մէջ: «Թող խաղաղութեան թագուհին աշխարհը պահպանէ պատերազմի խենդութենէն» յայտարարեց ան եւ կոչ ըրաւ քաղաքական պատասխանատուներուն լուրջ խղճի քննութիւն մը կատարելու Աստուծոյ առջեւ, որ «խաղաղութեան Աստուած մըն է եւ ոչ թէ պատերազմի: Ան կ'ուզէ որ եղբայրներ ըլլանք եւ ոչ թէ թշնամիներ»: 2020-ին հրատարակուած «Բոլորս եղբայրներ ենք» (*Fratelli tutti*) Կոնդակէն մէջբերելով, Ֆրանչիսկոս գրեց որ «Պատերազմը միշտ քաղաքականութեան եւ մարդկայնութեան ձախողութիւն մըն է, ամօթալի անձնատուութիւն մը, փախուստ մը շարիքի ուժերուն դիմաց: Կը խնդրեմ առնչուած բոլոր կողմերէն ետ կենալ ամէն արարքէ որ կրնայ աւելի տառապանք պատճառել ժողովուրդներուն ապակայունացնելով համակեցութիւնը ազգերուն միջեւ եւ վարկաբեկելով միջազգային իրաւունքը»:

«Դժբախտաբար չի դադրիր Ուքրանիոյ դէմ բռնարար նախայարձակումը, անիմաստ ջարդ մը ուր ամէն օր կը կրկնուին աւերածութիւններ եւ վայրագութիւններ: Ասոր համար չկայ արդարացում: Թախանձագին կը խնդրեմ բոլոր միջազգային հասարակութեան դերակատարներէն, որպէսզի իսկապէս պարտաւորուին վերջ դնել այս նողկալի պատերազմին» բացազանչեց Ֆրանչիսկոս Պապը Կիրակի, 20 Մարտի Մարեմեան աղօթքի աւարտին անգամ մը եւս ձայնը բարձրացնելով եւ պաղատելով որ պատերազմը եւ սպանդը դադրին:

«Պէտք է քարէ սիրտ մը ունենալ անտարբեր մնալու եւ թոյլ տալու, որ այդ կործանումը շարունակուի, որ շարունակուին հոսիլ արեան եւ արցունքներու գետերը» ըսաւ ան խորապէս յուզուած:

Իտալիոյ Եպիսկոպոսական համահաւաք դասին պատկան «Tv2000» հեռուստակայանի հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, Սուրբ Աթոռի Պետական Քարտուղարը՝ Կարդինալ Փիեթրօ Փարոլին բացատրելով Սուրբ Աթոռին պատրաստակամութիւնը՝ միջամտելու եւ երկխօսութեան ուղիներ գտնելու Արեւելեան Եւրոպայի մէջ տեղի ունեցող պատերազմին համար, ըսաւ. «Եթէ մեր ներդրումը կարող է օգտակար դառնալ մենք պատրաստ ենք»:

Հարցազրոյցի ընթացքին Կարդինալ Փարոլին յիշեցուց, որ Սուրբ Աթոռին միջամտութիւնը տեղի կ'ունենայ տարբեր մակարդակներու վրայ, սկսեալ կրօնական մակարդակէն, որով հրաւէր կ'ուղղուի «անյապաղ եւ յարատեւ աղօթելու, որպէսզի Տէրը խաղաղութիւն պարգեւէ այդ նահատակ երկրին», հաւատացեալները ներգրաւելով այս խմբային աղօթքին մէջ»:

Շեշտելով նաեւ դիւանագիտական ձեռնարկներու կարեւորութիւնը, Սուրբ Աթոռի Պետական Քարտուղարը ըսաւ որ այս ծիրէն ներս արդէն կը գործադրուին տարբեր փորձեր եւ եթէ Սուրբ Աթոռին ներկայութիւնը ու անոր գործունէութիւնը կրնայ օգտակար դառնալ՝ «մենք պատրաստ ենք» ըսաւ Ծիրանաւորը:

Վատիկանի լրատուամիջոցներուն հետ զրոյցի մը ընթացքին պատասխանելով Հաղորդակցութեան Բաժանմունքի Խմբագրութեան տնօրէն՝ Անտրէա Թորնիելլիի «Ո՞րն է Սուրբ Աթոռին դիրքը» հարցումին, Փարոլին նշեց թէ անիկա «Արբազան Պապին յաճախ կրկնած դիրքն է. զօրեղ ո՛չ մը պատերազմին, անիկա խելագարութիւն է, ու պէտք է զայն կանգնեցնել»:

«Կը խնդրենք, կոչ կ'ուղղենք բոլորի խղճմտանքին, թող անմիջապէս դադրին մարտերը» ըսաւ Կարդինալ Փարոլին՝ ակնարկելով այն «ահաւոր պատկերներուն, որոնք կը հասնին Ուքրանիայէն, խաղաղ բնակչութեան միջեւ զոհերու, որոնց շարքին կիներ, անպաշտպան մանուկներ, որոնք իրենց կեանքով կը վճարեն պատերազմի խելագարութիւնը, միլիոնաւոր գաղթականներ որոնց մեծամասնութիւնը կիներ եւ մանուկներ են, որոնք կը փախչին ուսմբերէն»:

Թէ ինչո՞ւ Քահանայապետը յարձակումէն երկու օր ետք այցելեց Սուրբ Աթոռի մօտ ռուսական դեսպանատուն հարցումին պատասխանելով, Կարդինալ Փարոլին ընդգծեց, թէ այդ աննախընթաց քայլով Ֆրանչիսկոս Պապը ուզեց Մոսկուայի իշխանութիւններուն բացայայտել իր խոր մտահոգութիւնը



Եւ ասոր համար է, որ որոշեց անձնական քայլով դիմել Սուրբ Աթոռին մօտ Ռուսական համադաշնութեան դիւանագիտական ներկայացուցչութեան:

Կարդինալ Փարոլին խօսեցաւ նաեւ Լավրովի հետ ունեցած իր հեռախօսազրոյցի մասին նշելով թէ ինք կրկնեց Քահանայապետին կոչերը՝ անյապաղ դիմելու զինադադարի:

«Խնդրեցի վերջ դնել մարտերուն եւ դիմել բանակցային ուղիին լուծելու համար հակամարտութիւնը» ըսաւ Կարդինալ Փարոլին աւելցնելով նաեւ, թէ ինք շեշտեց որ յարգուին քաղաքացիական բնակչութեան իրաւունքները ու բացուին մարդասիրական միջանցքները: «Ես դարձեալ վստահեցուցի Սուրբ Աթոռին ամբողջական պատրաստակամութիւնը՝ Ուքրանիոյ մէջ խաղաղութիւն հաստատելու համար որեւէ միջնորդութեան» ըսաւ Ծիրանաւորը:

Ի վերջոյ Կարդինալ Փարոլին խօսեցաւ քաղաքականութեան եւ դիւանագիտութեան դերի մասին, ցաւով ընդունելով, որ «Պերլինի պատի փլուզումէն ետք, մենք չկարողացանք ազգերու միջեւ համակեցութեան նոր համակարգ մը կառուցել, որ կարող ըլլար շրջանցել զինուորական դաշինքը եւ տնտեսական շահերը»: «Ուքրանիոյ մէջ պատերազմը բացայայտութիւնն է այդ պարտութեան: Բայց եւ այնպէս կ'ուզեմ նաեւ ըսել՝ թէ երբեք ուշ չէ, երբեք ուշ չէ խաղաղութիւնը հաստատելու, երբեք ուշ չէ ետ քայլ ընելու համաձայնութեան հասնելու համար» հաստատեց Փարոլին:

«Հակառակ զէնքերը լռեցնելու համար ուղղուած բոլոր կոչերուն մենք կը գտնուինք լարուածութեան մը դիմաց որ նուազելու ոչ մէկ նշան կու տայ: Ի՞նչու» Թորնելլիի հարցումին, Կարդինալ Փարոլին պատասխանեց. «Պատերազմը նման է քաղցկեղի, որ կ'աճի, կը տարածուի եւ ինքն իրմէ սնունդ կը քաղէ: Անիկա անվերադարձ արկածախնդրութիւն մըն է, ինչպէս ըսած էր Սուրբ Յովհաննէս Պօղոս Բ: Մենք պէտք է դժբախտաբար ընդունինք, որ ինկած ենք յորձանուտի մը մէջ, որ կարող է անհաշուելի ու սարսափելի հետեւանքներ ունենալ բոլորի համար: Երբ հակամարտութիւն մը տեղի կ'ունենայ, երբ կ'աճին անմեղ զոհերուն թիւերը, միշտ դժուար է ետքայլ կատարելը, նոյնիսկ եթէ անիկա անկարելի չէ, երբ կայ իսկական կամք այդ մէկը կատարելու. դժուար է, արդարեւ, բոլոր ջանքերով հետապնդել բանակցութիւնները, դիմել որեւէ կարելի ճանապարհի՝ հասնելու համար լուծումի մը, հաստատակամ ըլլալ խաղաղութեան նախաձեռնութիւններ կատարելու մէջ»:

Այդ հաստատակամութեան վկայութիւնը կը շարունակէ տալ Վատիկան:

# ԴԷՊՈՒ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ ՄԸ



Համայն մարդկությունը այժմ կը գտնուի լուրջ սպառնալիքներու եւ մարտահրաւերներու դիմաց՝ քաղաքական, ապահովական, տնտեսական ու ընկերային մակարդակներու վրայ: Համաշխարհային չափանիշով անվտանգութեան գործօնը մեծ հարցականի տակ դարձաւ վերջին զարգացումներուն լոյսին տակ, մանաւանդ Արեւելեան Եւրոպայի Ուքրանիոյ տարածաշրջանին մէջ: Ընկերատնտեսական ծանր տագնապները (*մանաւանդ՝ սովի, սնունդի, առողջապա-*

հուլիսի 2020-ին սկսելու, ա՛յլ ավելի վատթարացան ոչ միայն աղքատ եւ յետամնաց երկիրներուն, այլ նաեւ յառաջադեմ հարուստ երկիրներուն մէջ: Հետեւաբար, աշխարհի տարածքին յառաջացող աննախընթաց մարտահրաւերներն ու ճնշող հիմնախնդիրները կը մղեն մեծ յեղաշրջումներու եւ կը պատճառեն անկայուն իրավիճակ մը բոլոր մակարդակներու վրայ: Նկատի առնելով ներկայ ծանրակշիռ պայմանները եւ միջազգային լարուածութիւնը, «հաւաքական անվտանգութեան» հետ առնչուող հարցերը կը վտանգեն միջազգային խաղաղ ու կայուն համակարգը եւ անոր գոյատեւումը:

Տակաւին կանուխ է լիովին պատկերացնել նոր համաշխարհային կարգը, որ կրնայ լոյս տեսնել մօտ ժամանակաշրջանին եւ ի յայտ գալ վերջին տուեալներուն համաձայն (ի մասնաւորի՝ գերուժերու հակամարտութիւնը Ուրքրանիոյ մէջ), նկատի ունենալով անոնց հակազդեցութիւնները ներկայ իրավիճակին վրայ եւ ահաւոր հետեւանքները համաշխարհային մակարդակի վրայ: Ուսումնասիրելով այժմու տարբեր միջազգային գործօնները, կարելի է եզրակացնել, թէ Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ կազմուած միջազգային թոյլ համակարգը ուշ կամ կանուխ հասնի իր վախճանին, եւ ներկայ արիւնալի տագնապը Ուրքրանիոյ մէջ, ըստ երեւոյթին, վերջ դնէ տեսականօրէն այսպէս ճանչցուած՝ «հաւաքական անվտանգութեան» ներկայ համակարգին, որ հաստատուեցաւ ՄԱԿի (Միացեալ Ազգերու Կազմակերպութեան) հովանիին տակ: Այլ խօսքով, ներկայ վտանգաւոր իրավիճակը կ'ընդգծէ միջազգային նոր համակարգի մը հրամայականը, որ վերատեսութեան ենթարկէ ՄԱԿի ընդհանուր կազմը եւ անոր հիմնական գործունեութիւնը, կամ նոյնիսկ պարտադրէ համաշխարհային նոր կառոյցի մը մշակումը, որպէսզի լաւապէս բացայայտէ եւ իւրացնէ միջազգային մակարդակով տեղի ունեցող բոլոր փոփոխութիւնները եւ զարգացումները վերջին տարիներու ընթացքին: Ուրեմն, լաւապէս ծանօթանալու համար «հաւաքական անվտանգութեան» համակարգին եւ ներկայ տիրող լարուած իրավիճակին, անհրաժեշտ է անդրադառնալ անոր պատմական հոլովոյթին մինչեւ օրս:

Նախ, հիմնական է ճշդել «հաւաքական անվտանգութեան» մօտեցումը, որ կը մեկնի միջազգային ընկերութեան ամբողջական միասնութենէն, ուր անվտանգութեան գործօնը սահմանափակ չէ, այլ ընդհակառակը՝ համընդհանուր պատասխանատուութիւն է միջազգային ընտանիքի բոլոր անդամներուն համար: «Հաւաքական անվտանգութեան» կարգախօսը (*Collective Security*) ծնունդ առաւ 20-րդ դարուն սկիզբը, հակասելով դարեր շարունակ որդեգրուած «գերուժերու հաւասարակշռութեան» (*Balance of power*) տրամաբանութեան, ուր անվտանգութեան գործօնը համընդհանուր չէր, այլ իւրաքանչիւր գերպետութեան առանձին շահագրգռութիւնն էր: Առաջին աշխարհամարտը (1914-1918) իր ահաւոր հետեւանքներով ցոյց տուաւ նախկին բռնատիրական համակարգին թերութիւնները եւ առիթ մը ընծայեց մշակելու համայն մարդ-



կութիւնը շահագրգռող այլ ապահով տարբերակ մը, որ աստիճանաբար երեւան եկաւ «հաւաքական անվտանգութեան» գաղափարականով եւ գործադրութեան դրուեցաւ՝ Ազգերու Դաշնակցային կազմակերպութեան միջոցաւ (*League of Nations*):

1920-ին հիմնուած՝ Ազգերու Դաշնակցային Կազմակերպութիւնը այդքան ալ չկարողացաւ կանխարգիլել միջազգային բեմին վրայ ծագող հակամարտութիւններն ու լարուածութիւնները մինչեւ երկրորդ աշխարհամարտը, որ բուռն ձեւով պայթեցաւ՝ 1939-ին եւ 1945-ին մղեց դէպի միջազգային նոր կազմակերպութեան մը հիմնադրութեան, որ ծանօթ եղաւ՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն անուամբ՝ (*United Nations*), օգտուելով նախկին կազմակերպութեան բացթողումներէն եւ վերահաստատելով ակտի խիստ ու ճշգրիտ օրէնքներ պահպանելու համար միջազգային կարգն ու կանոնը: Այս գծով, կարելի է ընդգծել, որ «հաւաքական անվտանգութեան» իրագործումը ՄԱԿի դրօշին տակ նախ եւ առաջ կ'ենթադրէ Ապահովութեան Խորհուրդի հինգ մնայուն անդամ գերպետութիւններու համախոհութիւնը: Այս նախապայմանով հաստատուած եւ զարգացած անվտանգութեան համակարգը գրեթէ անգործնական դարձաւ երկրորդ աշխարհամարտէն շատ կարճ ժամանակ յետոյ, երբ պատերազմէն յաղթական դուրս եկած երկու հզօր գերպետութիւնները (Միացեալ Նահանգներ եւ Խորհրդային Միութիւն) սուր պայքարի մը մէջ մտան, որ տեւեց չորս տասնամեակներ:

Բոլորին ծանօթ՝ «Արեւմուտք-Արեւելք պաղ պատերազմ»ը ժխտականօրէն հակազդեց ՄԱԿի անվտանգութեան համակարգին եւ չէզոքացուց անոր հիմնական գործունեութիւնը մեծագոյն տազնապներուն եւ հակամարտութիւններուն մէջ, որոնց մէջ երկու բեւեռային ուժերը ուղղակի կամ անուղղակի ձեւով մխրճուած էին (*Պերլին 1948, Քուպա 1962, Չեխոսլավաքիա 1968, Վիէթնամի եւ Աֆղանիստանի պատերազմները, եւն...*): Սակայն, հակառակ այս աննպաստ պայմաններուն, ՄԱԿը կրցաւ յարաբերաբար գործնական ներդրում մը ունենալ որոշ հակամարտութիւններու պարագային, միջազգային խաղաղարար ուժեր ուղարկելով դէպի տազնապալի շրջաններ կամ դրական նպաստ ունենալով զինադադարի եւ խաղաղութեան ամրապնդման զանազան ջանքերուն:

1990-ին, պաղ պատերազմի ակարտով եւ Խորհրդային Միութեան անկումով, լաւագոյն առիթը ստեղծուեցաւ վերականգնելու եւ վերաշխուժացնելու «հաւաքական անվտանգութեան» համակարգը, մանաւանդ Քուէյթի դէմ Իրաքի յարձակումէն յետոյ (*1990-91 թուականներուն*): Այդ ժամանակ, միջազգային ղեկավարները շեշտեցին նոր միջազգային համակարգի մը հրամայականին վրայ ՄԱԿի հովանիին տակ, որովհետեւ անոր իրագործման համար բոլոր արգելքները արդէն վերացած էին: Այսուհանդերձ, Միացեալ Նահանգներու տիրապետական ու ռազմավարական գերագոյն շահերը կրկին անգամ արգելք հանդիսացան լիիրաւ հաւաքական համակարգի մը վերականգնումին, որովհետեւ այդ գերպետութեան հիմնական նպատակն էր՝ աշխարհի բացար-

ձակ գերակշիռ ուժը դառնալ, վերջ տալով Խորհրդային Միութեան: Այդ օրեն, Միացեալ Նահանգներ ջանք չխնայեց հզօրացնելու եւ ընդլայնելու Հիւսիս Ատլանտեան դաշինքի կազմակերպութիւնը դէպի Արեւելք (*օղակը սեղմելով ասելի Ռուսիոյ եւ Հինաստանի շուրջ*), հարուածելով՝ ՄԱԿի համընդհանուր դերակատարութիւնը եւ չէզոքացնելով Ապահովութեան Խորհուրդի հիմնական գործունեութիւնը: Անշուշտ Միացեալ Նահանգներ, ինչպէս այլ գերպետութիւններ, հետապնդելով իր սեփական շահերը, փորձեց իր ձեւերով լուծել շատ մը հիմնախնդիրներ վերջին երեք տասնամեակներուն (*Աֆղանիստանի, Իրաքի պատերազմները, եւն...*), անտեսելով միջազգային կառոյցները եւ խեղճ վիճակի մէջ պահելով «հաւաքական անվտանգութեան» համակարգը:

Այժմ, կարելի է այլեւս խորհիլ տարբեր իրավիճակի մը մասին, Ուքրանիոյ պատերազմէն ետք, ուր Ռուսիա (նախկին Խորհրդային Միութեան ժառանգորդ գերուժը) հակադրուելով Հիւսիս Ատլանտեան ռազմավարական ձգտումներուն, զինուորական ցնցիչ քայլի մը դիմեց եւ մեծ դիրքորոշում մը որդեգրեց ընդդէմ Արեւմուտքին, որ իր կարգին տնտեսական լայն պատժամիջոցներ կիրառեց ռուսական պետութեան եւ անոր գերագոյն շահերուն դէմ: Այս շրջագիծին մէջ, միջազգային դերակատարներու կարծր դիրքորոշումներն ու անոնց թշնամական մօտեցումները ցոյց տուին թէ միջազգային ընտանիքը չի վստահիր այլեւս «հաւաքական անվտանգութեան» կարգախօսին, լուծելու համար համընդհանուր խնդիրները, այլ բոլորը կը դիմեն «գերուժերու հակակշիռ»ի նախկին հին ռազմավարութեան: Ուստի, համաշխարհային իրավիճակը նոր հանգրուան մը թեւակոխեց եւ ըստ երեւոյթին «նոր տեսակի պաղ պատերազմ» մը սկսաւ, որուն վտանգաւոր հետեւանքները կրնան բաւականին կործանիչ ըլլալ համայն մարդկութեան համար եւ յանգիլ դէպի ՄԱԿի ու «հաւաքական անվտանգութեան» համակարգի քայքայման:

Վերջապէս, վերադառնալով պատմական հոլովոյթին, «հաւաքական անվտանգութեան» առողջ եւ օրինական համակարգ մը հաստատելու բոլոր փորձերը ձախողութեան մատնուեցան համաշխարհային առաջին եւ երկրորդ պատերազմներէն յետոյ, երբ մեծ թիւով երկիրներ բռնատիրութեան տակ կը գտնուէին: Սակայն, այսօր՝ 21-րդ դարուն, յառաջադէմ գաղափարախօսութիւններու ու համաշխարհայնացման դարաշրջանին, ուր գրեթէ բոլոր երկիրները կերտեցին իրենց «ազատութիւնն ու անկախութիւնը», արդեօք կարելի չէ՞ վերամշակել ու վերահաստատել՝ համամարդկային չափանիշներով եւ տիրապետական ձգտումներէն անկախ «հաւաքական անվտանգութեան» նոր պատկերացում մը, փրկելու համար լարուած կացութիւնը եւ խաղաղ միջոցներով լուծելու համաշխարհային խնդիրներն ու 21-րդ դարու լուրջ մարտահրաւերները, նախքան երրորդ համաշխարհային աղետալի պատերազմ մը որ կրնայ բռնկիլ եւ իր բոցերուն մէջ ընդգրկել թերեւս համայն մարդկութիւնը:

# ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ Ա.Մ.Ն. ԴԵՍՊՈՂՆԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈԳԵԻՈՐ ՏԻՐՈՋ ՀԵՏ

Երկուշաբթի, 14 Մարտ 2022-ին, Լիբանանի մեջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիա այցելութիւն տուաւ Հայ կաթողիկէ պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ռաֆայել Պետրոս ԻԱ. Կաթողիկոս Պատրիարքին հետ:



Հանդիպումը առիթ հանդիսացաւ գրուցելու Լիբանանի ներքին քաղաքական եւ տնտեսական հարցերուն շուրջ: Անոնք ունեցան տեսակետներու փոխանակում՝ յատկապէս Լիբանանի ընկերային-տնտեսական տագնապի լուծման շուրջ:

Չրուցակիցները անդրադարձան նաեւ Ուքրանիոյ մեջ տիրող պատերազմական իրավիճակին՝ համաձայն գտնուելով, որ անհրաժեշտ է դիմել բոլոր միջոցներուն, հաստատելու համար խաղաղութիւնը՝ յարգելով ազգերուն եւ անհատներուն իրաւունքները:



# ՏՕՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՄԻՆ ԱԼԵՏՄԱՆ



Կազմակերպութեամբ Աշրաֆիէի Սրբոյ Կուսին Ալետման եկեղեցւոյ ժողովրդապետութեան, Ուրբաթ 25 Մարտ 2022-ին, Ալետման Սրբոյ Կուսին տօնին առիթով, Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ.Տ. Ռաֆայել Պետրոս ԻԱ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքը Աշրաֆիէի Սրբոյ Կուսին Ալետման

Եկեղեցւոյ մէջ մատուցանեց Սուրբ եւ Անմահ Պատարագը, առընթերակայութեամբ Հայր Սեպուհ վրդ. Կարապետեանի եւ Հայր Անտոն վրդ. Նորատունկեանի: Սուրբ Պատարագին իրենց մասնակցութիւնը բերին Պատրիարքական փոխանորդ Գերպօ. Գեորգ Եպս. Ասատուրեան, Գերապայծառ Գեորգ Խազումեան, Չմմառեան Միաբանութեան պատրիարքական ընդհանուր փոխանորդ Յ. Գաբրիէլ թ. ծ. վ. Սուրատեան, Մխիթարեան Միաբանութեան Լիբանանի եւ Միջին Արեւելքի մեծաւոր Հայր Մեսրոպ Սուլահեան, Լիբանանի հայ կաթողիկէ կղերը, Աշրաֆիէի Առաքելական Սբ. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Մեսրոպ Պէթրեճեան, իսկ Աւետարանական եկեղեցիէն՝ վերապատուելի Հայր Զոլաքեան: Պատարագին ներկայ գտնուեցան նաեւ պետական երեսփոխան Ժան Թալուզեան եւ շարք մը բաղաբական անձնակազմութիւններ ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը: Պատարագի սպասաւորութիւնը կատարեցին տեղւոյն ժողովրդապետութեան սպասաւորները եւ Չմմառու միաբանութեան ժառանգաւորները, երգեկցութեամբ եկեղեցւոյ «Կիլիկիա» երգչախումբին: Պատարագի աւարտին հաւատացեալները՝ Քահանայապետի խնդրանքով եւ Անոր հետ միաժամանակ՝ իրենց աղօթքները առ Աստուած բարձրացուցին՝ Անարատ Սուրբ Կոյսին նուիրագործելով համայն մարդկութիւնը եւ մանաւանդ Ռուսիոյ եւ Ուկրանիոյ տառապալից ժողովուրդները:



Photo Raffi  
www.PhotoRaffi.me



Lebanon - B.H. - Arax Str. 49/161  
Tel: + 961 71 703181 - 03 703181  
Email: photoraffi@hotmail.com  
Website: www.photoraffi.me

# ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՉՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՅՅԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԼԵՒՈՆ ՇԱՆԹ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ



Շաբաթ, 26 Մարտի յետմիջօրէի ժամը 4:00-ին, Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Կաթողիկոս Պատրիարքը հովուապետական այցելութիւն կատարեց Համազգայինի «ԼԵՒՈՆ ՇԱՆԹ» մշակութային կեդրոն՝ մօտէն ծանօթանալու կառոյցի եւ կեդրոնի աշխատանքներուն: Մուտքին՝ Հոգեւոր Տէրը դիմաւորեցին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամ Անդրանիկ Մարրութեան, Պուրն Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի, Ազգային վարչութեան ու Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամներ՝ ընկերակցութեամբ ՀՄԸՄ-ի շէփորախումբին: Շրջագայելէ ետք կեդրոնի յարկերուն մէջ ներկաները հաւաքուեցան «Գ. եւ Հ. Արմէնեան»



սրահ, ուր գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն ներկայ գտնուեցան ուսուցիչներ, պատասխանատուներ, գեղարուեստի դպրոցներու ուսանողներ ու ծնողներ:

Համազգայինի Լիբանանի Ծրջանային վարչութեան անունով ձեռնարկին բացումը կատարեց Ծաղիկ Յովսէփեան-Յարութիւնեան, որ ըսաւ, թէ Համազգայինի Լիբանանի կառոյցի պատմութեան մէջ յատկանշական ու յիշատակելի օր մըն է այսօր, որովհետեւ առաջին անգամ ըլլալով Հոգեւոր Տէրը հովուապետական այցելութեամբ կը գտնուի Համազգայինի «Լեւոն Ծանթ» մշակութային կեդրոն: «Հոգեւոր Հայր, ձեր ներկայութիւնը այսօր մեր աշխատանքներուն մօտէն ծանօթանալու եւ քաջալերելու զուգահեռ գօտեպնդիչ ուժ է մեզի, որպէսզի կրկնապատկենք մեր ճիգերը՝ ի սպաս հայ մշակոյթի զարգացման ու տարածման աշխատանքներուն: Ձեր մարդասիրական ու բարեսիրական բեղուն գործունէութիւնը եւ համեստ ու առաքելագործ հոգեւորականի տիպարը օրինակելի եւ դաստիարակիչ են իւրաքանչիւր եկեղեցականի, ազգային ու մշակութային գործիչի համար», ըսաւ ան, ապա ներկայացուց կեդրոնին մէջ գործող դպրոցներն ու մասնաճիւղերը: Ան Համազգայինի Լիբանանի Ծրջանային վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Հոգեւոր Տիրոջ, որ քաջալերելով Համազգայինի աշխատանքները, Լիբանանի կառոյցին նուիրեց 180 միլիոն լիբանանեան ոսկի:

Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը (Կոմիտաս, «Մանկական Հայր մեր»), «Տաւիղ» կիթառահարներու համոյթը (La Gitanita – Jurg Hochweber/ Corroscoscoc – bunde (traditionnel)), «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի դաշնակի ուսուցիչ Վերոնա Ռուսիպեան («Էլեկիա», Առնօ Պապանեան), «Արեգ» թատերական դպրոցէն Լիլիթ Տէմիրճեան եւ Կալիա Գարկայեան (մենախօսութիւն – ասմունք), ջութակ՝ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի ուսուցիչներ Արմէն ճէնտերճեան եւ Ռիթա Աստիքեան (Violin duet – Narekatsi Tagh – arr. K. Tchalikian), «Գայեանէ» պարի դպրոցի «Գոհար» խումբը, «Գուսան» երգչախումբէն Կարօ Զելէշեան («Յուշարձաններ»):

Խօսք առաւ երեսփոխան Յակոբ Բագրատունի, որ դրուատեց Հոգեւոր Տիրոջ օրհնաբեր այցելութիւնը կեդրոն՝ անելցնելով, որ այս կառոյցը Լիբանանի ամենէն թէժ օրերուն մէջտեղ եկաւ: Ան ըսաւ, որ այս այցելութիւնը տեղի կ'ունենայ դաժան եւ տագնապալի ժամանակի մը ընթացքին, բայց եւ այնպէս նոր կենսունակութիւն ու ապագայի հանդէպ յաւելեալ հաւատք ու վճռականութիւն կը սերմանէ Համազգայինի մեծ ընտանիքին եւ այս կեդրոնին մէջ գործող ու այս կեդրոնով շնչող երեսփաներուն ու երիտասարդներուն մէջ: Երեսփոխան Բագրատունի աւարտեց իր խօսքը նշելով, որ նման կառոյցներն են, որոնք մեր երիտասարդ սերունդներուն մէջ վառ պիտի պահեն հայկականութիւնը:



Այս Հոգևոր Տէրը արտի խօսք արտասանելով իր զգացմունքը արտայայտեց հիւրընկալութեան համար եւ ըսաւ, որ այս կեդրոնը սովորական մշակութային կառոյց ըլլալէ աւելի արուեստի ու մշակոյթի համալսարան մըն է: Ան շարունակեց ըսելով, որ հաւաքաբար պիտի յաղթահարենք մեր շուրջը



գտնուող դժուարութիւնները, որովհետեւ հայու նկարագիրը ապառաժի նման կանգուն է: Ան առաջարկեց մրցանքներ ծրագրել եւ տաղանդաւոր երեխաներուն համաշխարհային մակարդակի ուսում ու սլացք տալ, միաժամանակ իր պատրաստակամութիւնը յայտնեց սատարելու այս խիստ կենսական առաքելութեան: Հոգևոր Հայրը իր խօսքը ուղղելով ուսուցիչներուն շնորհակալութիւն յայտնեց անոնց ցուցաբերած զոհողութեան համար եւ աւարտեց նշելով, որ մենք ստեղծագործ ժողովուրդ ենք եւ միասնական աշխատանքով պետք է զօրացնենք մեր ինքնութիւնը:



Աւարտին Համազգայինի Լիբանանի Ծրջանային վարչութիւնը Հոգևոր Տիրոջ յանձնեց երախտագիտական յուշանուէր մը՝ «Թորոս Ռոպին» կերպարուեստի ակադեմիայի արուեստագիտուհի Տարիա Խտրշեանի գործերէն:





ՀԱՅԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ  
ԵՒ ԱԶԳԻՆՈՒ ՄԻՋԵՒ  
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ  
ՋԱՏԱԳՈՎ  
ՊԵՆԵՏԻԿՏՈՍ ԺԵ.Ի  
ՄԱՀՈՒԱՆ  
100-ԱՄԵԱԿ

Պենետիկտոս ԺԵ Ճենովացի Քահանայապետի մահուան 100 ամեակին առթիւ Ճենովայի «Աղքատներու Պանդոկ»-ի պաշտօնական դահլիճին մէջ տեղի ունեցան «Պենետիկտոս ԺԵ եւ իր ժամանակը» խորագիրով ուսումնաժողով մը եւ այլ ձեռնարկներ, նաեւ Հռոմի մէջ, յիշատակելու համար Առաջին Աշխարհամարտը «անիմաստ սպանդ» նկատող Քահանայապետին յիշատակը, որ եղաւ նաեւ մէկը այն հազուագիւտ ձայներէն, որոնք բարձրացան ի պաշտպանութիւն հայ ազգի զաւակներուն՝ 1915-ի կոտորածներու ընթացքին:

Անոր այդ առթիւ Սուլթանին ուղղած նամակին մէկ նմոյշը պահպանուած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ:

Պենետիկտոս ԺԵ. Երջանկայիշատակ Քահանայապետը, աւագանի անունով Ճաքոմո Տելլա Քիեզա, ծնած էր Ճենովա քաղաքին մէջ 1854 թուականին կոմսերու ժառանգ ընտանիքի մը յարկին տակ: 15 տարեկանին փափաք կ'արտայայտէ կուսակրօն կեանքին նուիրուելու եւ իրաւագիտութեան համալսարանական մասնաճիւղը աւարտելէ ետք՝ 21 Դեկտեմբեր 1878-ին կ'ընդունի քահանայական ձեռնադրութիւնը: Կ'անդամակցի քահանայապետական ակադեմիային, ուր կը պատրաստուին Սուրբ Աթոռին դիւանագետները: 1883-ին կը մեկնի Մատրիտ, ուր կը ծառայէ որպէս քարտուղար՝ Մարիանօ Ռամփոլլա Տէ Թինտարօ նուիրակին: 22 Դեկտեմբեր 1907-ին կը ստանայ եպիսկոպոսական օծումը ու կը նշանակուի Պոլոնիայի Արքեպիսկոպոս: 25 Մայիս 1914-ին կը նշանակուի Կարդինալ եւ երեք ամիս ետք Պիոս Ժ.ի մահով եւ Համաշխարհային Առաջին Պատերազմի սկիզբի օրերուն, Կարդինալական Համահաւաք դասը 31 Օգոստոս 1914-ին, որպէս Քահանայապետ կ'ընտրէ Կարդինալ Ճաքոմո Տելլա Քիեզան, որ կ'որոշէ առնել Պենետիկտոս ԺԵ. անունը:

Ան իր քահանայապետութեան առաջին օրէն իսկ իր ցաւը կ'արտայայտէ պատերազմի ողբերգութեան ի տես եւ 8 Դեկտեմբերին հրապարակած «*Ubi primum*» առաքելական յորդորագիրին մէջ կոչ կ'ուղղէ՝ որպէսզի «բոլոր անոնք՝ որոնք կը կառավարեն ազգերուն ճակատագիրը մէկդի դնեն իրենց անհամաձայնութիւնները ի շահ մարդկային հասարակութեան»:

Ան իր այս կոչերը կը կրկնէ բազմաթիւ առիթներով եւ 1917-ի Օգոստոսին «պատերազմող ժողովուրդներու ղեկավարներուն ուղղած նամակի մը մէջ, կը խնդրէ վերջ տալ այդ «անիմաստ սպանդին», հրաւիրելով զանոնք «խորհիլ իրենց Աստուծոյ եւ մարդոց առջեւ ունեցած մեծ պատասխանատուութեան վրայ»:

Պենետիկտոս ԺԵ.ի Քահանայապետութիւնը բացի խաղաղութեան ի սպաս անխոնջ յանձնառումէն յատկանշուեցաւ նաեւ Եկեղեցւոյ կեանքէն ներս կարելոր անցուդարձերով, որոնցմէ կարելորագոյններէն է 7 Մայիս 1917-ին անոր հրապարակած «*Providentissima Mater*» հրովարտակը, որով ի լոյս կ'ընծայուէր Եկեղեցական նոր Կանոնագիրքը, ապա 1 Մայիս 1917-ին, Ան կը հիմնէր Արեւելեան Եկեղեցիներու Ժողովը:

1919-ին Պենետիկտոս ԺԵ. Փարիզի մէջ բացումը կը կատարէ խաղաղութեան միջազգային համաժողովին, որուն առթիւ հրապարակած՝ «*Quod iam diu*» յորդորագիրին մէջ, յոյս կը յայտնէ՝ որ որոշումները որդեգրուին հիմնուելով քրիստոնէական արդարութեան սկզբունքներուն վրայ:

Երջանկայիշատակ Քահանայապետը իր մահկանացուն կը կնքէ Հռոմի մէջ 22 Յունուար 1922-ին:

**ՌՈՂԵՐ ԱԹԹԱՐԵԱՆ - Վատիկան**





Բոլորս երջանկութիւն կ'երագենք, թէւ մեր առօրեային մէջ, ականատես ենք ու ականջալուր, որ աշխարհը անմխիթար կը տառապի, շատերը կու լան, արդարութիւնը կ'անարգուի, պատերազմն ու ստելութիւնը հետզհետէ կը տարածուին մեզ յուսահատելու չափ:

***Մէկ խօսքով, վիստուրեան մատնուած ենք աշխարհի վիճակը տեսնելով:***

Տառապանքն ու մահը պիտի մնան միշտ մեր բանականութիւնը գայթակղեցնող եւ մեր հաւատքը փորձի ենթարկող իրականութիւններ:

Աստուած ինչպէ՛ս կրցաւ նման աշխարհ մը յղանալ ու ստեղծել:

Չարը, տառապանքն ու մահը կը հարկադրեն, որ մենք մեզ քննարկենք եւ աշխարհի իմաստի մասին մենք մեզ հարցափորձենք:

Մենք եկեղեցականներս, մինչեւ վերջերս կը կեդրոնացնէինք մեր քարոզները Աստուծոյ Տասնաբանեային (Տասը Պատուիրաններուն) վրայ, որովհետեւ կը կարծէինք, որ բաւարար էր խուսափիլ որոշ մեղքերէ. «Մի՛ սպաններ, մի՛ գողնար, Մի՛ ստեր, մի՛ շնար...» (Գիրք Ելից 20, 13-16), այլ խօսքով՝ գոհացած էինք Հին Կտակարանով, բնական օրէնքով, նուագագոյն անհրաժեշտով, զոր ամէն մարդկային էակ պարտի պահել, որովհետեւ արձանագրուած է իր ժառանգակիրներուն մէջ (gènes):

Նոր Կտակարանի շրջանը սկզբնաւորող մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս առիթն ունեցաւ հարուստ երիտասարդի մը ըսելու. «**Եթէ կ'ուզես կատարեալ (սուրբ) ըլլալ...եկո՛ւր եւ հետեւէ՛ ինձի**» (Մատթէոս 19, 21): Յիսուսի առաջարկը Տասնաբանեայէն անհունապէս աւելի անդին կ'երթայ:

Երանութիւնները աստուածային բարքերու եւ Աստուծոյ ճաշակներուն նկարագրութիւնն են, Իրեն հաճելի բարեմասնութիւնները:

Աստուածային տրամաբանութեան համաձայն՝

Կորսնցնողը՝ կը շահի,

Կեանքը տուողը՝ զայն կը փրկէ,

Վերջինը՝ կը դառնայ առաջին:



Մարդկային երջանկությունը չի՛ կայանար հանգստաւէտ կեանքի, պատիւի, ուժի ու հարստութեան մէջ:

Յիսուսէն ի վեր, երջանկությունը կը պատկանի անոնց, որոնք մեր Տիրոջ պէս կ'ըլլան, Իրեն կը նմանին, կը պայքարին ու կը չարչարուին ` աշխարհը փրկելու եւ խաղաղեցնելու համար:

Աստուծոյ արքայութեան մէջ, մարդիկ երջանիկ կ'ապրին երբ աղքատ են, վշտահար եւ հալածուած:

Այսպէս ըսելով՝ չեմ դրուատեր աղքատութիւնը, կամ՝ հալածանքը, որոնք չարիք են ու չարիք ալ կը մնան. այլ՝ սրտի աղքատութիւնը, անջատումն ու հալածանքը «*վիսն արդարութեան*»:

Չեմ ուզեր ըսել, որ այս կեանքին մէջ աղքատ, քաղցած կամ դժբախտ պէտք է ըլլանք, որպէսզի անդենականութեան մէջ մեծահարուստ, կուշտ եւ մեծարուած ապրինք:

Ո՛չ: Մենք ի վիճակի կ'ըլլանք Աստուծոյ նման ըլլալու (Հմնտ. Ա. Յովհաննէս 3, 2) երբ մեր երջանկությունը գտնենք սրտի աղքատութեան մէջ՝ ուրիշներուն օգնութեան հասնելով, իրենց հետ քաղցրութեամբ վարուելով, յանցաւորներուն ներելով, հանգիստ չգտնելով՝ որքան մեր եղբայրներն ու քոյրերը հալածուած են, անարգուած ու խոշտանգուած:

Երանի անոնց, որոնք «կու լան», կը ցաւին անարգուած արդարութեան, լքուած ընչազուրկներուն, անդարման եւ յուսակտուր հիւանդներուն պատճառով:

Երանի անոնց, որոնք ուրիշներուն նկատմամբ կարեկից են, հոգատար եւ կարող՝ Քրիստոսը տեսնելու յանձինս քաղցածներուն, թափառականներուն եւ թողլքուածներուն:

Քրիստոնէական կրօնքը մեզ յոյսով կը լիացնէ ու մեզի կը յիշեցնէ, որ Քրիստոսի «**Լերան Քարոզ**»-ով սկսած արքայութիւնը ընթացքի մէջ է արդէն եւ իր գագաթնակէտը պիտի գտնէ յաւիտենականութեան մէջ:

Մարդկային գոյութիւնը անիմաստ է, եթէ ուզենք զայն հասկնալ առանց հաշուի առնելու զայն շարունակող ու ամբողջացնող յաւիտենական կեանքը: Մեր բոլոր հաշիւները կը սխալին, եթէ փորձենք արդարացնելու անդենականութենէն անջատուած երկրաւոր կեանքը: Պիղատոսին առջեւ Յիսուս առանց երկիմաստի հաստատեց. «**Իմ թագաւորութիւնս (արքայութիւնս) այս աշխարհէն չէ**» (Յովհաննէս 18, 36):

Երանի մեզի, եթէ լսենք Աստուծոյ խօսքը եւ ջանանք զայն ի գործ դնել, որովհետեւ այս կերպով այժմէն ապրած կ'ըլլանք Աստուծոյ արքայութեան մէջ:

Մարդկային էակի նպատակը սրբութիւնն է, «Միրով» բնութագրուած սրբութիւն:

Աստուծոյ պէս ըլլալ (Հմնտ. Ա. Յովհաննէս 3, 2) կը նշանակէ բնութենէ եւ բանականութենէ աւելի անդին երթալ եւ գործել Յիսուսի առաջարկած Աւետարանական Երանութիւններուն տրամաբանութեան համաձայն:

# ԱՊԱԳԱՅ ՔԱՉԱԿՈՐՈՎ ՀՈՎԻՒՆԵՐՈՒ ԴԱՐԲՆՈՅԸ

(Հայր Սահակ Վրդ. Քեշիշեանի ձեռնադրութեան առթիւ)



Հայոց պատմութեան էջերը լեցուն են հայ մշակոյթային, քրիստոնէական ու հոգեմտաւոր արժէքներու պահպանութեան, ընդհանրապէս հայապահպանութեան եւ հայ ժողովուրդի գոյերթին մէջ առաջին իսկ դարերէն մինչեւ այսօր հայ կղերականին կատարած վճռորոշ դերակատութեան մասին վկայութիւններով: Այդ դերակատարութեան բնոյթը փոխուած է պատմութեան իրաքանչիւր ժամանակահատուածի պայմաններուն ու պահանջներուն պարտադրանքով: Բայց չէ փոխուած նպատակը՝ երաշխաւորել Ազգին յաւերժութիւնը իբրեւ Հայ եւ Քրիստոնէայ:

Հայ հոգեւորականին վիճակուած այս պատմական առաքելութեան ջահը ճանապարհորդած է դարէ դար ու փոխանցուած է սերունդէ սերունդ շնորհիւ ազգապահպանման գործին մէջ Հայ Եկեղեցւոյ ու Հայ Կղերին ստանձնած պատասխանատուութեան կարեւորութեան Հայ ժողովուրդի գիտակցութեան: Այս գիտակցութեամբ է որ Ազգին հոգեւոր եւ աշխարհական առաջնորդներուն առաջնահերթ մտահոգութիւններէն մէկը եղած է կոչումներու խնդիրը, այլ խօսքով նոր հոգեւորականներու պատրաստութիւնը: Այս մտահոգութիւնը աւելցած է մանաւանդ վերջին տարիներուն, որովհետեւ այսօր աւելի քան երբեք բերքը մեծ է, սակայն մշակները սակաւաթիւ են: Արդարեւ, այդ մշակներու թիւին անբաւարարութիւնը պատճառ կը դառնայ որ տարուէ տարի աւելնայ թիւը այն մարդոց եւ յատկապէս երիտասարդներու, որոնք կը հետամտին ամբողջական այլասերման առաջնորդող օտարամուտ բարքերու, հեշտակեաց եւ հաճոյամոլ կեանքի, կը հեռանան իրենց արմատներէն, կը դառնան անտարբեր ազգային, քրիստոնէական, բարոյական արժէքներուն հանդէպ եւ աստիճանաբար կ'աղաւաղեն Ազգին դիմագիծը իրենց շրջապատէն ներս: Այս պատճառով ալ, Հայ Եկեղեցին իր յատուկ ուշադրութեան եւ հոգածութեան առարկան դարձուցած է այս մշակներու պատրաստութեան լծուած հաստատութիւնները, որոնք կը կոչուին դպրեվանքեր:

Դպրեվանքերը սովորական կամ դասական հասկացողութեամբ ուսումնարաններ չեն: Անոնք կոչուած են պատրաստելու եւ Ազգին մատուցանելու իրենց ամենալայն հասկացողութեամբ քրիստոնէայ մարդու եւ գիտակից Հայու տիպարներ: Հոն է որ կը դարբնուին քրիստոնէական եւ ազգային արժէքներու կատարեալ գիտակցութեամբ օժտուած եւ այդ արժէքները տարածելու, Ազգին եւ Եկեղեցւոյ զաւակները այդ արժէքներով թրծելու կոչուած ապագայ քաջակորով Հովիւները, զորս կարելի չէ բաղդատել ժողովուրդին աշխարհական հովիւներուն հետ:

Բազմաթիւ են ու բազմատեսակ ազգ ու ժողովուրդ առաջնորդելու կոչուած անսքեմ հովիւները, ընտրեալ կամ պարտադրուած, ինքնակոչ կամ հովանաւորեալ, արժանաւոր կամ անարժան, բայց բոլոր պարագաներուն տակ հազուադէպօրէն ամբողջ հօտին պատկանող եւ հօտին անխտիր իւրաքանչիւր անդամը յուզող խնդիրներով տազնապող: Յամենայն դէպս, ինչպիսին ալ ըլլան՝ անոնք չեն կրնար բաղդատուիլ հաւատացեալ ժողովուրդը հովուելու կոչուած հոգեւոր առաջնորդներուն հետ, որոնք Աստուծոյ Հօտին Հովիւր ըլլալու կոչումը ստացած են: Ասոնք անհամեմատելի են: Որովհետեւ, այդ կոչումը պատահական մարդու չի տրուիր:

Այդ կոչումի թեկնածուն պետք է օժտուած ըլլայ այնպիսի ընդոճին շնորհներով եւ ապա ինքզինք օժտէ այնպիսի հոգեմտաւոր արժանիքներով, որ հօտը զինք իրաւամբ համարէ իր քաջակորով Հովիւր, անոր մէջ տեսնէ անձնուրաց, անբասիր, անշահախնդիր եւ իմաստուն առաջնորդը, եւ այս բոլորէն առաջ եւ վեր Աստուծոյ, Եկեղեցւոյ եւ ժողովուրդի խոնարհ ծառան:

Այդ ծառայութեան նուիրուելու առաջադրանքով դպրեվանքի նստարաններուն վրայ կամ անոր մատուոնին մէջ ստացած մտային պաշարը ու հոգեւոր հարստութիւնը ժողովուրդի ծառայութեան մէջ դնելու, անտարանելու, քարոզելու, բարոյախօսելու կամ յորդորելու համար, ապագայ Հովիւր դառնալու կոչուած ժառանգաւորը կարիքը ունի նաեւ տիրապետելու իր հոգեմտաւոր պաշարը հանրամատչելի դարձնելու եւ իրեն վստահուած ժողովուրդին հետ հաղորդակցելու միջոցներուն, որոնք բազմաթիւ են: Անոնցմէ միայն մէկն է հրապարակախօսութիւնը եւ հրապարակագրութիւնը, զոր իրենց ուսումնառութեան զուգահեռ մշակելու եւ այնուհետեւ զարգացնելու կոչուած են ժառանգաւորները, նախքան այն երանելի օրը երբ պիտի ստանան քաջակորով Հովիւի իրենց նուիրական կոչումը:

ՄԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆ



**We make  
book and booklet  
printing simple**




**online, offline,  
printed or digital**

**PRINTING  
from Այբ to Z**

**Just hand us the text**

(written or recorded)

**and we shall  
hand you the book  
printed,  
digital  
or audio**



+9613756940



karniprint@outlook.com



karniprint



# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տ. ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՔԷՇԻՇԵԱՆԻ



J.Nazlikian photo

Կոչում եւ նուիրում. ահա այն անհրաժեշտ տուեալները Քահանայական կարգի հասնելու ճամբուն վրայ:

Միաբան դառնալ կ'ենթադրէ անվերապահօրէն ծառայել միաբանութեան յառաջընթացին, եկեղեցւոյ պանծացումին, ազգային գերագոյն շահերուն ու ազգի բարգաւաճման:

Տրուած ըլլալով, որ Սահակ սարկաւազ Քէշիշեան նախանձախնդրութեամբ ու համակ նուիրումով կը մօտենայ եւ բծախնդրութեամբ կը վերաբերի վերոյիշեալ նուիրական սրբութիւններուն, նաեւ սոյն բնագաւառներուն մէջ աւարտած է ուսման ընթացքը, Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան վանքի վարչութեան եւ Հոգեւոր Տիրոջ հաւանութեամբ՝ Շաբաթ, 19 Մարտ 2022-ի յետմիջօրէի ժամը 4:00-ին, Պուրն Համուտի Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան անդամներէն Տ. Սահակ Սրկ. Քէշիշեանի քահանայական ձեռնադրութիւնը՝ ձեռամբ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ.Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքին:

Նախօրէին՝ Ուրբաթ, 18 Մարտի երեկոյեան ժամը 7:00-ին, Չմմառու վանական համալիրի փոխման Ս. Կուսին մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ քահանայական ձեռնադրութեան կոչման կարգը:

Յաջորդ օրը, ներկայութեամբ գերապայծառներ Գէորգ Ասատուրեանի, Յովհաննէս Թէրուզեանի եւ Գէորգ Խազումեանի, Չմմառու վանքի Մեծաւոր Հայր Գաբրիէլ Թ.Ծ.Վ. Մուրատեանի, Միխթարեան Միաբանութեան հայրերու, Առաքելական քոյր եկեղեցիէն Մակար Սրբազան Ազգարեանի, երեսփոխան զօրավար Ժան Թալուզեանի, նախկին երեսփոխաններ Ժագ Չուխատարեանի եւ Անթուան Շատերի, նախկին նախարար Ռիշար Գոյումնեանի, գերյարգելի եւ գերապատիւ վարդապետներու, արժանապատիւ հայրերու, առաքինազարդ քոյրերու, արտասահմանէն եւ Հայաստանէն յատուկ այս առթիւ Լիբանան ժամանած հայրերու եւ լիբանանեան քոյր եկեղեցիներու հայրերու, սկսաւ Սբ. եւ Անմահ Պատարագը, զոր մատուցեց Հոգեւոր Տէրը: Արարողութեան սկիզբը Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան Մեծաւոր՝ Հայր Գաբրիէլ Թ.Ծ.Վ. Մուրատեան առաջնորդեց Տ. Սահակ Սրկ. Քէշիշեանը դէպի խորան, ուր առընթերակայութեամբ Հոռնի Լեւոնեան վարժարանի Մեծաւոր Հայր Նարեկ Նաամոյեանի եւ Հայաստանի Սբ. Միքայէլ Դպրեվանքի տեսուչ Հայր Մաշտոց Չահթերեանի, տեղի ունեցաւ ձեռնադրութեան արարողութիւնը: Արարողապետն էր Սուրբ Միքայէլ ընծայարանի եւ Երանելի Իգնատիոս Մալոյեան դպրեվանքի տեսուչ Գրիգոր վրդ.Պատիշահ, իսկ Անուշաբոյր միւռոնը խորան բերաւ Մեպուհ վրդ. Կարապետեան:

Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ «Արծիւեան» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Մանուէլ Քէշիշեանի, արարողութեան տուաւ յաւելեալ խորհրդաւորութիւն:

Այս առթիւ իր արտասանած հայրապետական քարոզին մէջ Հոգեւոր Տէրը իր խօսքը ուղղելով նորո՞ծ քահանային, ըսաւ. «Միրելի նորո՞ծ հայր Սահակ վարդապետ, այսօր մե՞ծ տօն կը նկատեմ մեր բոլորի կեանքին մէջ: Մե՞ծ եւ ուրախալի տօն, որովհետեւ այսօր ծնար որպէս առաքեալ Քրիստոսի, այլ ոմն

Քրիստոս: Այսօր, Սուրբ Հոգւոյ առատ շնորհքներով օծուեցար Տիրոջ այգիին մէջ պտղաբերելու համար: Ան այգիին մէջ, ուր քու ծառայութեամբդ Քրիստոսի սրբարար արեամբ եւ կենարար մարմնով պիտի սրբացնես անոր հաւատացողները: Այսօր ընտրուեցար ինչպէս Պօղոս առաքեալը Դամասկոսի ճամբուն վրայ, այսինքն, քու մէջ հին մարդը մեռաւ, ծնելու համար Նոր մարդը, որ պիտի քարոզէ եւ իր բարի օրինակով վկայէ Քրիստոսի գալստեան եւ փրկչագործական առաքելութեան: Այսօր ընդունեցար Սուրբ Հոգին, ինչպէս առաքեալները ընդունեցան Հոգեգալստեան օրը: Հետեւաբար, ժամանակդ մի՛ վատնէր դիտելու միայն մարդոց թերութիւններն ու սխալները, այլ տես նաեւ անոնց դրական եւ բարի գործերը: Նորէն կը խրատեմ՝ մի վատնէր ժամանակդ դիտելու մարդկանց տկարութիւնները, այլ եղի՛ր օգնական տկարներուն, աղքատներուն, միսիթարիչ՝ վշտացեալներուն եւ հիւանդներուն: Առաջնորդ եղի՛ր ուղեկորոյսներուն, քաջալերող երիտասարդներուն, ուղղիչ անոնց կեանքի նպատակներուն: Քահանայական ծառայութիւնդ ըլլայ հոգիներու փրկութեան նուիրուած, որ այնքան ծարաւի են Քրիստոսի: Հոն է քու ամբողջական միսիթարութիւնդ, տեսնելով քեզի յանձնուած հաւատացեալներուն մէջ հոգեւոր ժպիտը, ուրախութիւնը եւ Աստուծոյ առատ շնորհքները անոնց փրկութեան աշխատանքին: Ընտանիքը աստուածային հաստատութիւն է. քու քահանայութեամբ, քեզի յանձնուած է պահելու ընտանիքին սրբութիւնը, միասնականութիւնը եւ մաքուր ընթացքը՝ նմանութեամբ Սուրբ Ընտանիքին: Յիշէ՛ Քրիստոսի խօսքը իր աշակերտներուն «հունձքը առատ է եւ մշակները քիչ»: Դուն այն կանչուածն ես, որ անսալով Աստուծոյ կանչին դարձար իր առաքեալը: Ուստի Աստուած քեզ ընտրելով, քեզի կը յանձնէ իր զաւակները եւ անոնց ապահովութիւնը՝ հասնելու երկնային անանց երջանկութեան: Այս ամէնը, քեզմէ կը պահանջէ սեփական կեանքի անէացումը մինչեւ վերջին կարծիքը արեան, ինչպէս Քրիստոսը Խաչին վրայ թափեց իր արիւնը՝ մեզ լուալու համար նախաձեռողներու սկզբնական մեղքէն: Քեզ խրատելը հեշտ է: Բայց, պիտի չպակսի մեզմէ խիզախութիւնը որդեգրելու Քրիստոսի փափաքը՝ որ է. «Գացէ՛ք մկրտեցէ՛ք բոլոր ազգերը անուամբ Հօր եւ Որդոյ եւ Ս. Հոգւոյն»: «Տարածեցէ՛ք բարի լուրը համայն աշխարհի»: Այս է նաեւ կոչումը Չմմատու Արծիւեան Միաբանութեան առաքեալներուն, որոնք Քրիստոսի պատգամը որդեգրելով՝ կ'երթան առաքելութեան, առանց փնտռելու սեփական կամքը, ցանկութիւնները եւ պայմանները, այլ Քրիստոսի նման առնելով մեր խաչը՝ նուիրուիլ ամբողջական ծառայութեան:

Միբելի Հայր Սահակ, այս պահուս, հայրական խրատս քեզի, թող մնայ կենդանի յիշատակ մը քեզի առաջնորդելու քահանայական առաքելութեանդ մէջ: Յիշատակ մը, որ յարատեւ քեզ խթանէ, խանդավառէ, եւ առաքելական կրակը վառ պահէ քու սրտիդ մէջ: Յիշատակ մը, որ քեզ մաքուր, եղբայրասէր,





Խաղասերի վկայութեամբ պահես Քրիստոսի աւանդը, հոն ուր պիտի ծառայես: Քաջ առաքեալ, առ քեզի Սուրբ Պօղոս առաքեալի խրատը, որ իր հոգեգաւակ՝ Տիմոթեոսին, կ'ըսէ «եւ դու որդեակ իմ, զօրացիր Քրիստոս Յիսուսի շնորհով», ապա կ'ըսէ. «յիշէ՛ որմէ աւանդուեցաւ քեզ, եւ որուն հաւատացիր...»: «Ուստի քեզի կը յիշեցնեմ, որ վերարժարծես Աստուծոյ շնորհքը որ տուի քեզի, իմ ձեռքերը դրի քու վրայ»:

Հոգեպարար աղօթքներու եւ խնկարոյր շարականներու ընկերակցութեամբ՝ ձեռնադրութեան արարողութիւնը ամբողջանալէն եւ սրբալոյս միւռոնի օծումը ստանալէն ետք, Հ. Սահակ քահանայական ամբողջական զգեստաւորմամբ՝ իր անդրանիկ օրհնութիւնը բաշխեց ներկայ ժողովուրդին:

Յաւարտ Ս. Պատարագին, բոլոր հաւատացեալները շնորհաւորական մաղթանքներով, համբուրեցին նուիրեալի միւռոնօծ ձեռքերը:

Նշենք որ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը ժամանած էր Ս. Փրկիչ եկեղեցի: Առաջին շարքին վրայ ներկայ էին նաեւ ձեռնադրեալին ծնողքը եւ ընտանիքը, ինչպէս նաեւ միաբանութեան մտերիմ հոգեւորականներ եւ բարեկամներ, նկատի առնելով որ ըլլալով շրջանի գաւակը, Հայր Սահակ սիրուած եւ յարգուած էր իր շրջանակին եւ եկեղեցասէր ժողովուրդին կողմէ: ՀԿՄ Չալքայի շէփորախումբին մասնակցութիւնը տօնական մթնոլորտ ստեղծած էր եկեղեցւոյ շրջափակին մէջ:





Շնորհաւորութիւններու ընդունումէն ետք, քահանայից դասն ու Սահակ վրդ. Քէշիշեանի ծնողքը մասնակցեցան Սուրբ Եղիա-Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցած ընթրիքին, որուն ընթացքին դրուատանքի, յորդորի, բարեմաղթանքի եւ շնորհաւորանքի խօսքեր արտասանեցին Հոգեւոր Տէրը, Գրիգոր վրդ. Պատիշահ: Պետրոս վրդ. Մաւրաշլեան ցուցադրեց իր պատրաստած տեսերիզը, որ կը նկարագրէր նորո՞ծ Սահակ վրդ. Քէշիշեանի կեանքի ուղին:

Յաջորդ օրը՝ Կիրակի, 20 Մարտ 2022-ի առաւօտեան ժամը 10:00-ին, նորո՞ծ Սահակ վրդ. Քէշիշեան իր անդրանիկ պատարագը մատուցեց Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ: Անոր քարոզը աւելի շատ գոհութիւն եւ փառաբանութիւն էր Տիրոջ, որ զինք արժանի ըրաւ Սուրբ խորանին ծառայելու եւ խորհուրդները մատակարարելու առաքելութեան: Ան խոստացաւ ամբողջովին նուիրուիլ իրեն վստահուած հօտին եւ անոր կարիքները հոգալ՝ ինչպէս կ'ընէր Յիսուս Քրիստոս:

Յաւարտ Սուրբ պատարագին, եկեղեցւոյ դահլիճին մէջ նորո՞ծ վարդապետը ընդունեց ներկաներուն շնորհաւորանքները:

# ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ

(1886-1908)



«...ՀՈԳԻՍ  
ԱՆԾԻՐ  
ՄՈԳՈՒԹԵԱՄԲ ՄԸ  
ԿԸ ԽՆԿԷ...»

Անգլիական գրականության մեջ հզոր դեմք մըն է եղած Թոմաս Բարլայլ (1795-1881):

Շանրախոհ փիլիսոփայ, բազմաթիւ գրողներու համար իր երկերը եղած են անգնահատելի ներշնչարան, ուր կը կարդանք իմաստազեղ յղացքներ.

«Իրերը անհունության վրայ բացուած պատուհաններ են իմաստասէր աչքին համար» (Հ. Մեսրոպ Ճանաշեան, Գրական Ցուլքեր թիւ 20, էջ 9, Վենետիկ-Ս. Ղազար, 1959):

Քարլայլի խօսքերը Մեծարենցի հոգին կարծէք կը պատկերեն. ներաշխարհը համակ այն բանաստեղծին, որ գիտցաւ ճի՛շդ այդ պատուհանը բանալ հայ քնարերգության մեջ, ցրցքնելով հոն համայն բնութիւնը իր շողերով ու հմայքով խայտարդէտ:

Ապարդիւն պիտի ըլլար այլ ոլորտներու մեջ որոնել ամբողջ մեծութիւնն ու եզականութիւնը Մեծարենցի արուեստին, որու նորայայտ եւ նոյնքան ալ հոգեգրաւ երանգաւորումները՝ մրրկեցին ու փոթորկեցին բազմաթիւ գրիչներ:

Մեծութիւն, որ մնաց անհասկնալի ու խնդրական իր ժամանակակիցներուն համար, պարզապէս որովհետեւ Մեծարենց լոյսի ու շողի բանաստեղծն էր, որ կը նշողէր հայ գրականության մեջ:

Եւ լոյսը...

Կարելի չէ՝ պարփակել գաճաճ մտքերու մէջ.

Կարելի չէ՝ «**Լոյսը ճաղերու մէջ քանտել**» (Հ. Վահան Յովհաննէսեան, Խեղճ Մարդկութիւն, էջ 24, Վենետիկ- Ս. Ղազար, 1948):

Ամէն մէկ տող, իրաքանչիւր պատկեր իր քով նկարուած են լոյսի ցոլքերով, ուր ամէն մէկ «**վանկ**» ճառագայթում մըն է Մեծարենցով առջուն:

**Լոյսի ու շողի իսկական համերգութիւն**՝ սուգուելու դէպի ալուցքը քանաստեղծին հոգեկան ապրումներուն, մասնակցելու անոր վրդովումներուն ու հրճուանքներուն, ինչպէս «**Սիրերգ**»-ին մէջ, ուր հակոտնեայ զգացումներ՝ ակնթարթի մը մէջ պիտի բախին դէմ առ դէմ, մերթ լոյսով հարբած, սակայն միշտ կարօտ լոյսի.

«**Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով...**

**Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի**» (Սիրերգ):

Սիրերգ դաժան՝ համբոյրներով արբեցած, որոնց պիտի յաջորդեն «**Երազի պահեր**»-ը ցնորական, տանելով քանաստեղծը դէպի այն աշխարհը պատրանուտ, ուր փնտռուք է ամէն ինչ.

«**Ես կը փնտռեմ մըտամուլար,**

**Ըղձանոյշի ձեռքն այն փափուկ, երկնային՝**

**Որ պիտի տար ինծի ծաղիկն ըսփոփանքին**» (Երազի Պահեր):

Փնտռել «**լոյսի շող մը**», կամ՝ «**զոյգ մը աչքեր**», քալելու «**Դէպի ափունքն երազիս...**» (Երազի Պահեր), անյազ պասուքն է լոյսի, որուն կը կղկաթի քանաստեղծը յարատեւ, դառնալով հետզհետէ սիրտ տաղտապող անձկութիւն մը հոգետանջ... Սպասումը.

«**Ես կը սպասեմ յորդ ու վըճիտ լոյսերուն՝**

**Որոնց բոցը պիտի ցոլայ**

**Անծիր ցայգուն մէջ հոգւոյս**» (Երազի Պահեր):

Երազի պահէ՛ր յամուրդի, որոնք պիտի մնան այդպէս անաւարտ եւ սպասումը՝ դեռ աւելի ճնշինչ.

«**Մինչ կը սպասեմ ջինջ լոյսերուն՝**

**Որոնք ծագիլ կը յամեն:**»

Տենդոտ «**Այգերգ**»-ն է ծաղկահասակ քանաստեղծին:

«**Գիշերին մէջ տրամօրէն**» (Այգերգ), երբ կեանքն համայն կը յուլանայ ամէնուր, սպասումի վայրկեանները հետզհետէ երկար կը թուին:

Բանաստեղծին կը մնայ անըջել անքթիթ,

«**Լոյս պարիկին՝ որ իղձերս պսակելու պիտի գար**» (Այգերգ):

Յարատեւ սպասում, ուրեմն, սպասում անվերջ՝ կարճատեւ կեանքի մը համար, որ պիտի կազմէ, սակայն, Մեծարենցի նկարագիրին այդ աննկուն գաղտնիքը, երգելու օր մը բուրվառներու խունկով լիացած

«**Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակին**» (Կիրակամուտք):



Հայ քնարերգակ քերթողութեան բարձրագոյն կատարին վրայ կը գտնուինք: Մեծարենց կը վերթուի «կամարներէն, խորանէն» դէպի արեւաբոյր երկինքներ, ուր սպասումը կը կորսնցնէ իր իմաստը՝ կարօտի ու տառապանքի. ան կը զգենու հաւատք, կը դառնայ խորան ու կը գմբեթաւորուի գերդ Եկեղեցի մը Հայկական, ուր լոկ Թեքեան մը ծնրադիր պիտի փորձէր մերձենալ՝ «Շարականի գետին մօտ» (Եկեղեցին Հայկական):

**Կիրակմո՛ւ տք...**

**«...Եկեալքս ի մտանել արեգականն**

**Տեսաք զլոյս երեկոյիս...»** (Լոյս Զուարթ):

Հակապատկեր անօրինակ... սակայն միակը, որ կարող է ամոքել բանաստեղծին անձկութիւնը ու շնորհել իր այդքա՛ն ցանկացած

**«Հոգւոյս պայծառ Կիրակին»:**

Հոգեղինացած Մեծարենց մըն է, որ կը պատկանի մարդկային հասողութեան այն ծիրին, որ լոյսի ծարաւ իր յաւիտենական փնտոտութիւն մէջ, կը հպաւորի օր մը աստուածային անպարագիծ տարողութեան ու նման նահատակ բանաստեղծին՝ կ'երթայ

**«Դէպի աղբիւրը լոյսին»** (Դանիէլ Վարուժան, Լոյսը):

Մեծարենցի բանաստեղծութիւնը կը դադրի ըլլալէ զուտ նկարչութիւն: Ըղձանուշի մը գողտր գգուանքները բաւարար չեն, այլեւս, իր տենչերը սփոփելու:

**«Ճառագայթի եմ ծարաւի...»** պիտի ըլլայ սրտակեղեք հառաչանքը երկրորդ «Այգերգի»-ին մէջ:

Ու Մեծարենցինը ծարաւ մը չէ՛ սովորական, այլ հոգիի կեղերջ ու ցաւագին աղաղակ՝ հանդէպ կեանքին իրեն վերապահած բոլոր տարաբախտութիւններուն... պատրանք, գրաքննութիւն, գրապայքար... որոնցմէ պարտասած՝ օր մը պիտի մորմոքէր.

**«Կ'ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,**

**Կ'ուզեմ որ մեռնի՛ն տիւ ու ժամանակ»** (Զմրան պարզ գիշեր):

Եւ այժմ, սպասումի ապարդիւն երագանքներէն ետք, բանաստեղծը դեռ աւելի գիտակից, թէ

**«Հոգւոյս մէջէն մերթ աշունի,**

**Կ'անցնի յանկարծ ուրուն տարտամ»** (Աշնանային հեծութիւններ), պիտի վերցնէ քօղը իր վերքերուն, խոստովանելով տրտմագին.

**«Ճառագայթի եմ ծարաւի...**

**...Հոգւոյս համար որ հիւանդ է»** (Այգերգ):

Իսկապէս ալ հիւանդ է Մեծարենց:

Հազիւ տասնվեց տարեկան ու անդարմանելի թոքախտը սկսած է իր էութիւնը հիւծել.

«Մութը կ' իջնէ հոգւոյս ` ուր վաղուց գիշեր է արդէն...  
 Անձրեւ կ' իջնէ հոգւոյս մէջ, կը զգամ մահուան սրսըփուրք,  
 Ձեռքս է պարապ մընացեր դատարկին մէջ սրգաւոր» (Մթնշաղներ):  
 Դատարկութիւնը ` փշրուած երազներուն...  
 Գիշերները խորտակուած թռիչքներուն:

Իր ներխորհրդածական պահերուն, գերազանց ցաւի սլացքով զարնուած, Ալիշանի հանճարը երկնեց տեսիլք մը հրաշակերտ, գծելով հոն կեանքի վսեմ նկարը ` իբրեւ հրիտակ համայն մարդկութեան.

«Գարնան ծաղիկը նկատել  
 Արդէն գարնան թարշամած,  
 Ոլորտածիր թռչունն ալ  
 Թռիչքի կէսին զարնւած» (Հ.Մ.Ճանաշեան, Ծաղկաքաղ Արդի Հայ Գրականութեան, Ա. հատոր, էջ 181, Հուսկ բան առ ոգին նուագահան, Վենետիկ- Ս. Ղազար, 1957):

Երբ մարդկային ամէն մտածողութիւն ու պատճառաբանութիւն կը հատնի ու կը թուի ունայն ցաւի իրականութեան առջեւ, երբ տառապանքին գոյութիւնը կը դառնայ ամէնօրեայ ներկայութիւն, Ալիշանի տեսիլքը կ' ընձեռէ այդ հայեացքը, որ իրարու կը մօտեցնէ պատրանքներով խոցահար ու վշտաբեկ անթիւ էակներ, որոնք անխուսափելիօրէն կը նոյնանան իրարու ` տառապանքի զոհասեղանին վրայ:

Այդ տեսիլքին մէջ է նաեւ նկարուած ամբողջ Մեծարենցը ` սքողուած փոքրիկ թռչունի մը պատկերին ներքեւ, որ թէւ զարնուած իր թռիչքի կէսին, կը շարունակէ սակայն թափահարել միշտ կեանքի ծարաւի.

«Հոգիս թռչնիկ մըն է,  
 Օղ ու լոյսի, երգ ու ծիծաղի կարօտ...  
 Քի չ մըն ալ դեռ,  
 Ա հ, շողա՛ , շողա՛ , բարի՛ արեւ, հիւա՛նդ եմ...  
 Վերջին անգամ մ մըն ալ,  
 Դեռ իրիկո՛ւն չեղած...» (Արեւին):

Իրիկո՛ւն վաղաժամ... լուսատենչ պատանիի համար, որ պիտի չունենայ ժամանակ ըմպելու «կեանքին յորդ ճաճանչը» (Մ. Մեծարենց, Ամբողջական Երկեր, Պ. Սնապեան, էջ14, Անթիլիաս 1986 ):

Ի՛նչ փոյթ... երբ Մեծարենցի հոգին վաղուց արդէն խորան մըն է «Կիրակա-մուտք»-ի խորհուրդով պարուրուած. այդ խորանը, որ

«... Հոգիս անծիր մոգութեամբ մը կը խնկէ» (Վայրկեաններ):

ՅՈՒՇԵՐ

# ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ ՉԱՅՐԵՆԻ



**Հայրենի կռուներ**, ահա այսպես կը բնորոշուէին մայր հայրենիքէն սփիւռքի հայ օճախներ ժամանող արուեստագէտներն ու մտաւորականները: Իրապէս անոնք կռուներ էին, որոնք մեզի կը բերէին մեր երկրի շունչը, մշակոյթը, երգն ու պարը:

50-ական թուականներու աւարտին, Դամասկոսի մէջ վայելեցինք ներկայութիւնը մեծանուն Թաթուլ Ալթունեանի ղեկավարութեամբ՝ Հայաստանի պե-





տական երգի ու պարի անսամպլին: Վաստակաւոր խումբի ելոյթները մեծ տպաւորութիւն գործեցին մեր քաղաքին մէջ: Խումբին ստեղծած տպաւորութիւնը բացառիկ էր: Կարօտ կար հայ երգի ու պարի նման որակեալ ելոյթներու: Խանդավառութեան այս ալիքը մղեց ստեղծելու սիրողական երգի ու պարի նոր խումբեր, նմանողութեամբ հանրայայտ անսամպլին, որոնցմէ էր նաեւ Դամասկոսի «Քնար» երգչախումբը, որուն մէկ անդամը ըլլալու պատիւը ունեցած էմ,



«Քնար» 1990  
Ժիրայր Ալթունեանի  
ղեկավարութեամբ





Արուեստագետներ  
Միրզոյեան եւ  
Բաբաջանեան

վայելելով հիմնադիր խմբավար հոգելոյս Հայր Անդրանիկ վրդ. Կոստանի պայծառ ներկայութիւնը ու նուիրումը հայ մշակոյթին, ապա երկար տարիներ ես ալ իմ կարգիս, շուրջս ունենալով հայ երգը սիրող խումբ մը երիտասարդներ աշխատած եմ երգչախումբի յարատեւութեան համար:

Այսպէս, զանազան առիթներով կը վայելէինք ներկայութիւնը հայրենի արուեստի խումբերուն, մտաւորականներուն ու արուեստագետներուն: 1964-ին, երգի պարի անսամպլը անգամ մը եւս այցելեց Դամասկոս ու նոյն խանդավառութիւնը ստեղծեց: Անսամպլի այդ ելոյթը ձայնագրած եմ ու այդ յաջողցնելու համար այդ օրերու ձայներիգի մեծկակ մեքենան շալկած մինչեւ սրահ ու զետեղած բեմին վրայ, ի հեճուկս կազմակերպիչներու դժգոհութեան: Այդպէս սկսաւ հետաքրքրութիւնը եւ սերը արձանագրելու, լուսանկարելու այդ ելոյթները, ինչպէս նաեւ մեր միութենական ու այլ ձեռնարկները ու տարիներու ընթացքին կազմելով մեծ արխիւ մը լուսանկարներու եւ ձայնագրութիւններու: 1990 թուականին Թ. Ալթունեանի տաղանդաւոր երկու որդիները, լուսահոգի վարպետներ Ռուբէնը եւ Ժիրայրը, յուզմունքով եւ հիացմունքով ունկնդրեցին այդ ձայնագրութիւնը մեր տան մէջ:

Այդ այցելութիւնները տարիներու ընթացքին աւելի յաճախակի դարձան: Սովետական մշակոյթի օրեր, զանազան փառատօներ եւ համերգներ, առիթներ էին որոնք մեր մօտ կը բերէին հայրենի կռունկները: 1966 թուականին Դամաս-

կոս ժամանեց մեծ երգչուհի Գոհար Գասպարեանը, իրեն ընկերակցող դաշնակահարուհի Էլեանորա Ոսկանեանին հետ: Հայաստանի «սոխակ»ը ունեցավ մի քանի բացառիկ համերգներ հայ կաթողիկե Ամինեան սրահին մեջ հմայելով ներկաները: Այդ ելույթներուն կազմակերպիչն էր այդ օրերուն շատ աշխուժ ազգային գործիչ տոքթ. Կարպիս Գարակեօղեանը: Ինչ ինչ պատճառներով երգչուհիի մեկնումը Դամասկոսէն ուշացավ եւ Գոհար Գասպարեանը դաշնակահարուհիին հետ մեկտեղ, ամէն օր կ'այցելէին տոքթ. Կարպիսի դարմանատունը, ապա կու գային իմ ակնոցի վաճառատունս որ շատ հեռու չէր: Գոհար Գասպարեանը կ'ըսէր.- «Մարգիս, լաւ որ խանութդ կայ»: Ու կը գրուցէինք հինէն ու նորէն, հայրենիքէն, ներգաղթէն ու ան կը պատմէր Եգիպտոսէն, ուրկէ ալ ներգաղթած էր Հայաստան:

Երանելի օրեր էին: Ամէն հայրենի խումբի այցելութիւնը տօն էր մեզի համար: Ծանօթութիւն ու բարեկամութիւն հաստատեցի Հայաստանի լաւագոյն պարուսոյցներէն «Բարեկամութիւն» պարի պետական անսամպլի գեղարուեստական ղեկավար Նորայր Մեհրապեանի հետ, որ մի քանի առիթներով այցելեց Դամասկոս: Նոյնպէս բարեկամութիւն հաստատեցի Հայաստանի պալէի պետական խումբի գեղարուեստական ղեկավար Վիլէն Գալստեանի ու հմուտ պարուսոյց Ռուտովֆ Խառատեանի հետ, որոնք իրենց հոյակապ խումբով եկած էին մասնակցելու Դամասկոսի միջազգային տօնավաճառին ընկերակցող փառատօնին: 1982 թուականի 29 Հոկտեմբերէն 12 Նոյեմբեր քաղաքս այցելեցին հայրենի արուեստագէտներու մեծ խումբ մը գլխաւորութեամբ մեծ երգահաններ Առնօ Պապաճանեանի ու Եղուարդ Միրզոյեանի, հրաւերովը Սովետական-Սուրիական բարեկամութեան յանձնախումբին: Խումբին մաս կը կազմէր նաեւ երկնային ձայնի տէր երգչուհի Լուսինէ Զաքարեանը, դաշնակահարուհի Մարիանա Յարութիւնեանը ու «Կոմիտաս» յայտնի քառեակը: Անոնց կողքին էին նաեւ պետական անձնաւորութիւններ, գրողներ ու ճարտարապետներ: Արուեստագէտները սքանչելի ելույթներ ունեցան Դամասկոսի ու Հալէպի մեջ: Սովորութեանս համաձայն այդ ելույթները թէ ձայնագրած եմ եւ թէ լուսանկարած:



Վիլէն Գալստեան  
Դամասկոս 1980







Լուսինե Չաքարեան՝  
Առևտրաբանական  
հետ



Միրզոյեանի եւ  
Բաքաջանեան

Այդ ելույթներու ընթացքին Լուսինե Չաքարեանի իմ նկարած յաջող մէկ լուսանկարը մի քանի տարի առաջ լոյս տեսաւ հայրենի երիտասարդ ուսումնասիրող Սերկէյ Մանուէլեանի մեծ երգչուհիին նուիրուած հատորին մէջ: Այս առիթով Դամասկոսի լաւագոյն ճաշարաններէն «Քլիւպ տօրիան»-ի մէջ պաշտօնական ընթրիք մը տրուեցաւ ի պատիւ հայրենի արուեստագէտներու, ներկայութեամբ պետական ներկայացուցիչներու ու դամասկահայութեան ընտրանիին: Այնտեղ եւս հայրենի արուեստագէտները իրենց տաղանդը ցուցադրեցին: Ինծի ալ առիթ տրուեցաւ երգելու Պապաճանեանի «Ազգ փառապանձ» սքանչելի երգը մեծանուն վարպետի ընկերակցութեամբ: Պապաճանեան գովեստով արտայայտուեցաւ երգեցողութեանս վերաբերեալ: Յաջորդ օրը Պապաճանեան ու Միրզոյեան այցելեցին վաճառատունս: Կատարեցի տեսողութեան քննութիւն երկու վարպետներուն, տրամադրելով նոր ակնոցներ: Քանի մը օր ետք անոնք, ընկերակցութեամբ պատուիրակութեան անդամներու ու ծանօթ բարեկամներու մեր տան հիւրերն էին: Երեկոն վերածուեցաւ բացառիկ համերգի: Խանդավառ ու ուրախ էին մեծանուն արուեստագէտները: Պապաճանեանը կատարեց իր նոր







յօրինած կատակ երգը՝ «Կարօն ու Ժիւլիէթը» ընկերակցութեամբ Եղուարդ Միրզոյեանի: Այդ բոլորը կը ձայնագրէի, մինչ վարպետը կատակով կ'ըսէր որ յանկարծ չարձանագրուի իր խօսակցութիւնը, քանի որ երբեմն խօսակցութեան մէջ կը սպրդէին քննադատութիւններ այդ օրերու սովետական կարգերու վերաբերեալ եւ որոնք իստիւ արգիլուած էին: Ափսոս որ քիչ ժամանակ անց 1983 թուականին վախճանեցաւ Առնօ Պապաճանեանը, հայ մշակոյթին ժառանգելով անկրկնելի ու անմահ երաժշտութիւն ու ինքն ալ անմահանալով հայ ժողովուրդի մեծամեծներու կողքին: Բարեկամութիւնը Եղուարդ Միրզոյեանի հետ շարունակուեցաւ երկար տարիներ: 1989 թուականին, մեծ երկրաշարժէն ետք Երեւան այցելեցինք խումբ մը դամասկահայ միութենական պատասխանատուներու հետ, գաղութիս համեստ օժանդակութիւնը տեղ հասցնելու ու հայրենի պատասխանատուներէն տեղեկանալու թէ ինչպէ՛ս կարելի էր օգտակար ըլլալ այդ օրերուն մեծ վիշտ ու ցաւ ապրող մեր հայրենակիցներուն: Այդ օրերուն առիթ ստեղծուեցաւ հանդիպելու Հայաստանի երաժշտահաններու միութեան նախագահ Եղուարդ Միրզոյեանին: Միասնաբար մեկնեցանք Դիլիջան, երաժշտահաններու ստեղծագործական տուն, այդ սքանչելի համալիրը որ կառուցուած էր մայեսթրոյի ջանքերով ու այսօր կը կոչուի իր անունով, որպէսզի հայրենի արուեստագէտները հրաշագեղ բնութեան գիրկին մէջ, լաւագոյն պայմաններով կարելիութիւն ունենային ստեղծագործելու ու հանգստանալու: Երեւան վերադարձին, Միրզոյեան մակագրելով ինձի նուիրեց նոր լոյս տեսած իր ստեղծագործութիւններու վերջին ձայնասկաւառակը: Այսպիսին էր Եղուարդ Միրզոյեան մեծ երաժիշտը, որու մտերմութիւնը վայելած էմ:

Այս նոյն հայրենիք այցելութեան ընթացքին, ունեցայ բախտորոշ հանդիպում մը մայեսթրօ ժիրայր Ալթունեանին հետ շնորհիւ հայրենի ականաւոր թաւջութակահար Ճոն Գեորգեանի, որուն հետ բարեկամութիւնս սկսած էր 60-ական թուականներու աւարտին, երբ ինք որպէս սովետական մասնագէտ, կը դասաւանդէր Դամասկոսի պետական երաժշտանոցի մէջ: Ահա երբ Ճոնին տեղեկացուցի թէ Դամասկոսի մէջ վերականգնած ենք «Քնար» երգչախումբի գործունէութիւնը եւ յայտնեցի փափաքս ունենալու հայրենի մասնագէտ խմբավար մը, որ ղեկավարէր երգչախումբը ու աւելի լաւ մակարդակի հասցնէր խումբի երգեցողութիւնն ու կատարումները: Ան ինձի ընկերակցեցաւ ու առաջնորդեց հանդիպելու իր ազգական խմբավար ժիրայր Ալթունեանին հետ, որդին մեծանուն Թաթուլ Ալթունեանի: Այսպէս սկսաւ գործակցութեան արդիւնաւետ շրջան մը ու մայեսթրօն եղաւ առաջին մասնագէտներէն, որոնք սփիւռքի մէջ աշխատանք տարին տեղական խումբերու հետ ու շատ բան սորվեցուցին, նոր որակ ու շունչ հաղորդելով սիրողական խումբերուն: Մայեսթրօ Ալթունեան 10 տարիներ ղեկավարեց «Քնար»-ը: Տարիներ շարունակ վայելեցինք մայեսթրոյի մտերմութիւնը ու ջերմութիւնը: Անմոռանալի կը մնայ Քնար երգչախումբի Հայաստան այցելութիւնը 2004 թուականին, մասնակցելու «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» համահայկական փառատօնին: Մայեսթրօ ժիրայրը իր հոգատարութեամբ պարուրեց բոլորը ու իր միջնորդութեամբ երգչախումբին առիթ տրուեցաւ երգել Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրի կամարներուն հակ եւ ապա Սպենդիարեանի անուան օփերայի բեմին վրայ: Մեր վերջին հանդիպումը եղաւ 2017-ի Մեպտեմբերին մեր Հայաստան այցելութեան ժամանակ: Ինչպէս միշտ ինքն էր մեզ դիմաւորողը Զուարթնոց օդակայանին մէջ: Եռանդուն աշխուժ, ամէն ինչ կ'ընէր իր ղեկավարած Թաթուլ Ալթունեանի անուան երգի պարի պետական անսամպլը իր բարձրութեան վրայ պահելու: Ափսոս, անժամանակ մահը 2020 թուականին իլեց մեզմէ մեր ամենասիրելի «Կռունկ»ը՝ մայեսթրօ ժիրայր Ալթունեանը, սակայն ան կ'ապրի բոլորիս սրտերուն մէջ, մանաւանդ «Քնար»ի անդամներուն:

Ահա այսպէս, ուզեցի բաժնեկցիլ «Մասիս»ի ընթերցողներուն հետ այս յուշերը, վստահ ըլլալով որ անամպ ու պայծառ օրեր պիտի գան ու հայրենի կռունկները միշտ պիտի այցելեն սփիւռքահայ օճախներ, բարի լուրեր հաղորդելու, արուեստ ու մշակոյթ փոխանցելու:

**18 Մարտ 2022**

**ՍԱՐԳԻՍ ԶԷՇԻՇԵԱՆ**  
**Դամասկոս**



# ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ



Կիրակի 27 Փետրուարին՝ Սուրբ Աթոռի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը ծաղկեպսակ մը զետեղած է Վատիկանի պարտէզներուն մէջ 2018 թուականին տեղադրուած Սուրբ Գրիգոր Նարեկացիի արձանին առջեւ, ոգեկոչելով անցեալ տարի Ֆրանչիսկոս Սրբազան Պապին կողմէն ընդունուած որոշումը, որով 27 Փետրուարը տիեզերական Կաթողիկէ Եկեղեցւոյ օրացոյցին մէջ ներառուեցաւ՝ որպէս Նարեկացիի յիշատակին նուիրուած ծիսական տօն:

Ծաղկեպսակը զետեղեց Սուրբ Աթոռի մօտ հաւատարմագրուած ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Տիար Կարեն Նազարեանը:



## Սուրբ Գրիգոր Նարեկացին եւ սուրբերու համոզիչ համամիութենականութիւնը



Երկուշաբթի 28 Փետրուար 2022-ին, Հռոմի Սուրբ Թովմաս Աքրոինացիի՝ Անճելիքում, քահանայապետական համալսարանէն ներս տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Նարեկացիի յիշատակին նուիրուած համամիութենական աղօթք եւ Աբրահամ Տերեանի «Ի խորոց սրտի. Սուրբ Գրիգոր Նարեկացիի աղօթքներու ծանօթագրուած թարգմանութիւն» խորագիրով գիրքին շնորհանդէսը՝ կազմակերպուած Սուրբ Աթոռի մօտ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցչութեան, ՀՀ դեսպանատան եւ Անճելիքում համալսարանի համամիութենական ուսանողներու մասնաճիւղին կողմէ: Միջոցառումին մասնակցեցան դեսպաններ, Վատիկանի, դիւանագիտական, ակադեմիական եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:


Համամիութենական աղօթքին քարոզը ներկայացուց Արեւելեան Եկեղեցիներու Ժողովի Կառավարիչ՝ կարդինալ Լէոնարտօ Սանտրին, որ իր յուզիչ խօսքը սկսաւ Սուրբ Գրիգոր Նարեկացիէն քաղուած մէջբերումով մը՝ հրաւիրելով ներկաները աղօթելու սուրբի խօսքերով, անոր ձայնով՝ Տիրոջմէ խնդրելով նոյն հաւատքի եւ նոյն խորութեան խորհրդածութեան պարզելը:

### Գիրքի շնորհանդէս

Համամիութենական այս աղօթքէն վերջ տեղի ունեցաւ փրոֆ. Աբրահամ Տերեանի «Ի խորոց սրտի. Սուրբ Գրիգոր Նարեկացիի աղօթքներու ծանօթագրուած թարգմանութիւն» գիրքի շնորհանդէսը: Նոյնպէս «Անճելիքում»ի համալիրէն ներս այս ձեռնարկի բացման արտայայտուեցաւ Կարտինալ Քուրտ Քոի, որ ներկաները ողջունելով շեշտեց, որ սա եւս կարելի է աղօթքի արարողութիւն մը բնորոշել: Արդարեւ, կարտինալը այս հաւաքոյթը համարեց հնարաւորութիւն մը՝ Կաթողիկէ եւ Հայ Առաքելական եկեղեցիներու բարեկամութիւնը տօնախմբելու եւ առաւել եւս՝ տօ-

նախամբելու այն իսկական հաղորդությունը, որ արդեն գոյություն ունի երկու քոյր եկեղեցիներուն միջեւ: Կարտինալը վերյիշեց հոգելոյս Յովհաննէս-Պօղոս Բ. Սրբազան Պապի խօսքերը, ըստ որոնց սուրբերու համամիութենականությունը «գուցէ ամենահամոզիչն է»: Աւելի վերջ կարտինալը ընդգծեց, որ Նարեկացին բոլորէն աւելի կարողացած է արտայայտել հայ ժողովուրդի զգայնությունը: Անոր պատգամը թէւ խորապէս արմատաւորուած է իր ժողովուրդի փորձառութեան մէջ, սակայն, կը ներկայացնէ համընդհանուր եւ համամիութենական արժէք: Կարտինալը Ս. Գրիգոր Նարեկացիին բնորոշ համարեց երկու յատկանիշ: Առաջինը՝ անոր անկեղծությունն է, որ զայն դարձուցած է «մարդկային աղքատութեան բանաստեղծը», Ոյթիլա Պապի բնորոշումով: Երկրորդ յատկանիշն է՝ փորձություններու մէջ Աստուծոյ նկատմամբ խորին վստահությունը. վստահություն, որ կը բնութագրէ հայ ժողովուրդի պատմությունն ու ոգեղինությունը: Երրորդը՝ համընդհանուր զօրակցությունն է խարսխուած մարդկային եղբայրութեան եւ սուրբերու հաղորդութեան վրայ: Սա Նարեկացին մղած է նոյնանալու բոլոր ժամանակներու եւ վայրերու աղքատներու եւ մեղաւորներուն հետ, բարեխօսելով բոլորին համար: Ի շարունակություն, Կարտինալ Քոխ ընդգծեց նաեւ Նարեկացիի համընդհանուր համերաշխութեան ու մարդասիրութեան ձգտումները: Ան եւս մեկնաբանեց 2015 թուականին, Փրանչիսկոս Ա. Սրբազան Պապին կողմէ Ս. Գրիգոր Նարեկացիի «Տիեզերական եկեղեցւոյ վարդապետ» հռչակման նշանակությունը: Քոխ սա որակեց «նուէրներու փոխանակումի հոյակապ օրինակ մը՝ մէկ եկեղեցի կառուցելու ուղղութեամբ»: Հուսկ, Կարտինալ Քոխ անդրադարձաւ այս օրերու պատերազմական լարուածութեան՝ մատնանշելով Փրանչիսկոս Սրբազան Քահանայապետին կողմէ «Խաղաղութեան վարդապետ» բնութագրուած Ս. Նարեկացիի մէկ այլ յատկանիշը, որով կարծես ան խաղաղութեան քրիստոնէական մեծ պատգամ մը եղած ըլլայ, ցաւով լեցուն աղաղակ մը, որ ողորմություն կը խնդրէ բոլորին համար: «Թող Ս. Նարեկացիի օրինակն ու բարեխօսությունը մեզ առաջնորդեն միասնութեան ու խաղաղութեան այս ճանապարհին վրայ», եզրափակեց Քոխ:

Գիրքի ծանօթացման այս հաւաքոյթի տւուողութեան զեկուցումով մը հանդէս եկաւ Հռոմի Արեւելագիտութեան քահանայապետական կանառի դասախօսներէն փրոֆ. Մարքօ Պաիս, որ շատ յայտնի հայագէտ մըն է: Այս առթիւ ան խորհրդածություններ ըրաւ փրոֆ. Աբրահամ Տէրեանի հեղինակած գիրքին շուրջ՝ ընդգծելով անոր գիտական բարձր արժէքը: Աւելի վերջ ելոյթ մը ունեցաւ փրոֆ. Աբրահամ Տէրեան, որ այս հաւաքոյթին համար յատկապէս հրաւիրուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգներէն: Ան մանրամասնօրէն արտայայտուեցաւ Ս. Գրիգոր Նարեկացիի ծիսական աստուածաբանութեան մասին: Հուսկ, դեսպան Կարէն Նազարեանն ալ հանդէս եկաւ սրտի խօսքով մը:





# ԴԱԴԻՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ ՀՌՈՄԻ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Մարտի 27-ին Հռոմի Սան Նիկոլա դա Տոլենտինո (Սուրբ Նիկողայոս) եկեղեցույ մէջ Իտալիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած է ճարտարապետ Արա Չարեանի եւ վերականգնող Քրիստին Լամուրէի՝ Դադիվանքի հայկական վանական համալիրի որմնանկարներու վերականգնման աշխատանքներուն նուիրուած «Դադիի վանք Dadivank» գրքի շնորհանդէսը:



Ձեռնարկը տեղի ունեցավ Հայաստանի եւ Իտալիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին նուիրուած ձեռնարկներու շրջագիծէն ներս: Ներկաները ողջունած եւ ելոյթով հանդէս եկած է Իտալիոյ մօտ ՀՀ դեսպան Ծովինար Համբարձումեանը:

Դեսպանը իր ելոյթին մէջ կարեւորած է նման ձեռնարկներու կազմակերպումը եւ հայերէն ու օտար լեզուներով գիտական ուսումնասիրութիւններու առկայութիւնը:

Դեսպանը յատկապէս կարեւորեց այս ձեռնարկի անցկացումը այսօր՝ հաշուի առնելով իր վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական դարաւոր ներկայութեան մասին պատմական վկայութիւնները վերացնելու ուղղութեամբ Ազրայէնանի որդեգրած քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ Արցախի մէջ հետեւողականօրէն առաջ տարուող էթնիկ գտման միտումները:

Ձեռնարկի ողջոյնի խօսքով հանդէս եկած է Քահանայապետական Լեւոնեան հայ վարժարանի տնօրէն Գերապայծառ Հայր Նարեկ վարդապետ Նամոյեանը: Արա Չարեան եւ Զրիստին Լամուրէ հանդէս եկան Դադիվանքի որմնանկարներու վերաբերեալ ծաւալուն նկարագրութեամբ, որուն ընթացքին մանրամասն ներկայացուած են Դադիվանքի վանական համալիրի Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ գտնուող՝ 1297-ին թուագրուող, որմնանկարներու յայտնաբերման եւ ուսումնասիրման պատմութիւնը, ցուցադրուեցան որմնանկարներու եւ հայերէն արձանագրութիւններու վիճակը վերականգնումէն առաջ եւ յետոյ:

Ձեռնարկին ներկայ էին դեսպաններ, դիւանագէտներ, բարձրաստիճան հոգեւորականներ, դատաւորներ, ակադեմական եւ մշակութային շրջանակի գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, լրագրողներ:

ԱՐՄԵՆՊԵՍ



Գիտե՛ք որ նկարներն այլ իրենց կենսագրությունը ունին:  
 Մտնոց մասին տեղեակ ըլլալու համար կարելի է կատարել ճամբորդություն մը  
 դէպի երեւոյթներու ժամանակագրութիւն, դէպի՝ անցեալ:

## Նկարի Մը Պատմութիւնը

# «ՎԵՆԵՏԻԿԻ ԹԵԻՎԻՈՐ ԱՌԻԻԾԸ»

**Վենետիկի Սան Մարկո հրապարակի սիւնին վրայ կանգնած առիւծը, որ դարեր շարունակ կը խորհրդանշէ Վենետիկը, իրականութեան մէջ հայոց վերջին թագաւորութեան՝ Կիլիկիայի առիւծն է, որ ի պահ տրուած է Վենետիկին մեր արքայութեան կործանումէն յետոյ:**

**Հայոց արքայական խորհրդանիշներու ընդունման արարողութիւնը, որուն համար Վենետիկի դուքսը մեծ շքախումբով, նաւակներով դուրս եկած էր ծով, հայ պատուիրակներուն հանդիպելու համար, այժմ վերածուած է աշխարհահռչակ վենետիկեան քառնաւալի, որուն իրական շարժառիթը արդէն շատոնց մոռցուած է:**

**Մնացած է միայն դուքսի ծիսական ելքը նաւակով բաց ծով, որպէս քարնաւալի մեկնարկի նշան, եւ ոսկէ մատանի ծովուն մէջ նետելու աւանդոյթը, իբրեւ հայոց թագի եւ խորհրդանիշներու հետ փոխանակման պատասխան նուէրը՝ ծովուն, քանի որ Կիլիկիան այլեւս չկայ...**

Դարեր առաջ Միջերկրական ծովուն բացուող հզօր թագաւորութիւն կար՝ Արմէնիա անունով: Մենք՝ հայերս գայն Կիլիկեան Հայաստան կը կոչենք, կամ պարզապէս՝ Կիլիկիա: Մօտ հազար տարի առաջ քրիստոնէայ հայերը սուրով եւ հուրով այդ հողերու վրայ նախ իշխանութիւն հիմնեցին, ապա հասան թագաւորութեան փառքի, իսկ հայ անունը նոյնացաւ խիզախութեան եւ արդարամտութեան հետ:

Անցան տարիներ: Երբ արդէն անհնար էր պահել հայկական պետականութիւնը, հայ վերջին թագաւորը լքեց իր երկիրը եւ ուղեւորուեցաւ բարեկամ քաղաք՝ Վենետիկ: Եւ որպէսզի մեր փառքն ու պատիւը ծաղրուծանակի առարկայ չդառնան անհաւատ կեղեքիչներու ձեռքին, իր հետ Վենետիկ բերաւ նաեւ Հայաստանի խորհրդանիշները, որոնցմէ մէկը՝ թելաւոր առիւծն էր՝ Աւետարանով:

Այս բոլոր խորհրդանիշները ի պահ տրուեցաւ Վենետիկին՝ մինչեւ վիճակը հանգստանայ եւ հնարաւորութիւն ստեղծուի կրկին վերադառնալ «չքնաղ երկիր մեր Արմէնիա»:

Հայոց թագաւորին դիմաւորելու համար Վենետիկի դուքսը իր շքախումբով անձամբ նաւով դուրս եկած էր ծով: Մօտենալով Հայոց արքայի նաւուն, ան ի նշան բարեկամութեան ջուրը կը նետէ իր ոսկեկոտ մատանին: Իսկ Վենետիկի ազնուագարմ տիկնայք՝ Հայոց արքային հանդէպ ամօթխածութենէն ծածկած էին իրենց երեսները բազմազան դիմակներով:



Թելաւոր առիւծը մնաց Վենետիկ: Դարեր անց Նափոլէոն կայսրը, Վենետիկը գրաւելէ յետոյ գմայլած էր այդ քանդակով եւ Փարիզ ուղարկած Արմէնիայէն բերուած թելաւոր առիւծը: Աւելի ուշ թելաւոր առիւծը վերադարձուեցաւ Վենետիկ քաղաքին՝ ջարդուփշուր եղած: Մեծ ջանքերու շնորհիւ միայն յաջողուեցաւ զայն փրկել կործանումէ:

Հայ արքան իր մահկանացուն կնքեց Փարիզի մէջ: Իսկ մեզի հասաւ միայն Վե-

նետիկի դիմակահանդէսը, որուն իրական պատմութիւնը այսօր մոռցուած է: Թելաւոր առիւծը դարձաւ Վենետիկի խորհրդանիշը, մինչդեռ որեւէ յիշատակում կրանիթեայ սիւնին վրա խոյացող թելաւոր առիւծի ծագումին մասին... չէ պահպանուած:

Ն.Է.Ն.









# HUMANITAS



**Cookies that taste good...  
And do good...**

**Zaatar Sticks | Salty Cookies | Sweet Cookies  
Armenian Cookies | Cookies with walnuts & raisins  
Cookies with dates | Salty Cookies with dates  
Anise Cookies | Sables**

**For your orders contact us on:  
00961 1 560 852 | 00961 3 381 046 | [info@humanitas.org.lb](mailto:info@humanitas.org.lb)**